

891 99 . 092

U- 99₁₂

1912 № 1810. 13 APR 2011

ԹԱԿԵՆՍ ԱՌԿԱՐԵԳԵՍՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՈՂԻ ՎԻՇՏԸ

ՄՈՒՐԱՑԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Պատմական—գրական վերլուծություն



1912

891.99.0

Մ-994

arm
4622

246

831.99.092

15-99 ch

ԹԱԳԵՈՍ ԱՌԴԱՐԵԳԵԱՆ

ՀՈՂԻ ՎԻՃՏԸ

ՄՈՒՐԱՑԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕННА
Академии Наук
СССР



1912.



Արտատպած «Արարատ» ամսագրից:



60817-67

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ելեքտրաշարժ Տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

ՀՈՂԻ ՎԻՇՏԸ

Մ ՈՒՐԱՑԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

I.

Հայոց նոր գրականության այն փոքրիկ ածուն, որ պէտք է լինի մեր քննության առարկան, ուստի այլախօսիկ վիպասանի, չնորհալի իւմորիստի-Մուրացանի երեք երկերն են. «Խորհրդաւոր միանձնուհին», «Նոյի ագռաւն» ու «Առաքեալը» որոնք թէև հեղինակի գեղարուեստական ստեղծագործության մի փոքրիկ մասն են կազմում, բայց և այնպէս գրականության զարգացումն ուսումնասիրողի համար յատուկ նշանակութիւն ունեն: Մուրացանի երկերի միջից այս երեքն առանձնացնելը քմահաճոյքի արդիւնք չէ, այլ հիմնուած է նրանց ներքին կապի վերայ: այս երեք երկը միասին կազմում են մի ամբողջութիւն, որ նուիրուած է հասարակական նշանաւոր հարցերից մէկի—հայ գիւղի դրութեանը:

1904 թուականին իւր գրուածքների հրատարակութիւնն սկսելիս՝ Մուրացանը «Երկասիրութիւնների» առաջին հատորում ընթերցողին ուղղած երկտողի մէջ գրում է.

«Նիւթերը փոխանակ ժամանակագրական կարգով դասաւորելու, ինչպէս առհասարակ ընդունուած է անել, բարեք դատեցի համադրել ներքին բովանդակութեան համաձայն, որպէս զի կարելի լինէր միևնոյն հատորի մէջ միաժամանակ ամփոփել այնպիսի երկեր, որոնք իրար հետ ունին որոշ կապ, կամ որոնք միասին առած կազմում են մի ամբողջութիւն: Այս իսկ պատճառով ներկայ հատորը . . . ամփոփում է իւր մէջ ա. «Նոյի ագռաւը», բ. «Առաքեալը» և գ. «Խորհրդաւոր միանձնուհին», որոնք թէպէտ լոյս են տեսել զանազան ժամանակներում և ունին

տարբեր նիւթեր, բայց, ըստ գաղափարի էութեան, կազմում են մի ամբողջութիւն:

Գեղարուեստական այս ամբողջութիւնն արդիւնք է XIX դարի երկրորդ յիսնամեակի կովկասահայ հասարակութեան տնտեսական-սոցիալական կացութեան. վերջինս աւելի լաւ հասկանալու համար անհրաժեշտ է մի քանի խօսք ասել նոյն դարի առաջին յիսնամեակի մասին:

XIX դարի առաջին յիսնամեակում գիւղացիութիւնն ընդհանրապէս տնտեսական բարօր դրութեան մէջ է գտնուում. գիւղերում գեռ ևս իշխում է գլխաւորապէս բնական, փակ, տնային տնտեսութիւնը. փողի ձգտումը հասարակական այս խմբի մէջ տնտեսական գործունէութեան նպատակ չէ. հողի սակաւութիւնն նոյնպէս չէ զգացւում: Գիւղացիները թէև հարստութիւնով միմեանց հաւասար չեն, բայց գիւղում սոցիալական շերտաւորումներ գեռ ևս չկան: Կարգերն ու բարքերը լիովին նահապետական են:

Խաչատուր Աբովեանը «Վերք Հայաստանի» վէպի մէջ՝ հիացած այսպէս է նկարագրում այն ժամանակուայ գիւղացու տունն ու նահապետական նիստ ու կացը:

«Տունն ու շիրախանէն հազար բարութիւնով լիքը տրաքում էին ու Աստուծոյ հոգի կար մէջըներում . . . Գինին կարասներով շարած . . . մառանը եմիշտ, կախանով, տանձ ու խնձորով խլթխլթում ու մտնողին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմացնում էր: Նրա հարսն ու փեսէն կամ մէկ աղիղ զոնաղը, որ գլուխը բարձին չէր դնում էս անմահական բարութեան մէջը, էնպէս իմանում էր, թէ դրախտումն ա աչքը խփում կամ բաց անում: Որը երկու, որը երեք բազ ունէր, նոքար, հօտաղ դռանը հաղիր. ու տան ներսն ու պուճախը դրամբում էր: Կարասներով կողակ, կճճներով պանիր ու զաւուրմա, աքաշներով զոխ, բոխ, ողորմակութ, բզրզներով եղ ու կարագ, մոթալներով պանիր. — ճով, ինչ տուն: Տասը զոնաղ որ էն սհաթը նրա դռանը վէր գային, սաղ մէամիս ուտէին, խին . . . նրա տանխէրն ու բարաքեա-

թը հն կար, հն կար: . . . Մէկ փարի բան բաղարիցը տուն չէր գալ, էն էլ կտաւ, շապկացու, շուխացու. շատը հարսներն ու աղջկերքն էին նրանց համար մանում, գործում, կարում: Նրանց կնանոնցը որ մտիկ տայիր, խելքդ կերթար, խառ ու զումաշի միջում կորած էին: . . . Մէկը մէկի ջգրու շատ անգամ իրանց օղլուշաղին էնպէս էին ծաղկում, զարգարում, ինչպէս գարնան վարդը, . . . : Շատը չորս հինգ հարսն ունէր տանը, որ մէկ տեղը ցաւելիս ուզում էին գլխովը պախտ դան ու ոտները կում անեն, խմեն: Մէկ բան ուղելիս ոտի տեղ գլխի վրայ էին դնում, որ նրա ասածն անեն, ու ձեռքները դռներին դրած աչքը կթած ունէին, որ տեսնեն, թէ իրանց տէրը կամ զոնաղը ինչ կհրամայի, որ կատարեն: Կեսուրը կամ կեսառը մէկ աչքը քցելիս ուզում էին տեղն ու տեղը հալչին, էնքան հնազանդ էին»¹⁾

Աբովեանի ասածը հաստատում է Ղազարոս Աղայեանը «Խաժանութիւն» կոչուած պատմութեան մէջ, որը մինչև այժմ՝ ուշագրութեան չէ արժանացել, չնայած որ պարունակում է դրականութեան պատմագրի համար մեծ արժէք ունեցող փաստեր:

Պէտք է ասել, — գրում է Արութիւն և Մանուէլի» հեղինակը, — որ Սմբատի մանկութեան ժամանակ նրանց գիւղաքաղաքում նահապետական սէր և բարեկամութիւն կար: Չարութիւն եթէ կար, գիտակցական չէր, այլ մանկական: Մեծ մարդիկը այնքան միամիտ էին, որ երբեմն մանկական չարութիւն էին անում: Մարդիկ չէին տարբերում ոչ մի բանով, ամենքն էլ գաղափարակից էին միմեանց, մէկ հաւատ ունէին, մէկ յոյս ու մէկ սէր: Չկար անհատական ազատութիւն, բայց նրա գոյութիւնն զգալի չէր ոչ ոքի: Կանայք նոր ձևի հագուստ հագնելը իրանց համար անպատշաճութիւն էին համարում, մեծերի մօտ չխօսկան մնալը՝ փառք ու պարծանք: Մարդ տնիւղ-

1) Խաչատուր Աբովեան, «Վերք Հայաստանի». Թիֆլիս, 1908, Հրատ. Բազումայ Հայ. Կուլտ. Միութեան, կր. 54-56:

ճութիւն էր համարում զրկել նրանց իրանց այդ միակ մխիթարութիւնից: Արտաքուստ ստրկութիւն երեցող վիճակն ստրկութիւն չէր, այլ մի նահապետական սրբացած ու ընտելմունք դառած սովորութիւն, և գտնւում էր ոչ բռնութեան, այլ հայրական սիրոյ հովանաւորութեան տակ: Մեծերի առջև փոքրերի՝ ձեռք սրտին դրած կանգնելը, ձայն ծաղուն չհանելը, կուրօրէն հնազանդիլը մի թշուառութիւն չէր նրանց համար, այլ մեծ բախտաւորութիւն: Ազատ էին ջրերն ու անտառները, ազատ էին սարերն ու ձորերը, սակաւ էին մարդիկ եւ շատ էր տեղը. եւ մարդիկ ապրում էին ինչպէս Աբրահամի օրերում: Ազատ էին մարդիկ քաղաքակրթական պարագաներով, բայց գոհ էին իրանց վիճակից, ոչ մի բանի պակասութիւն չէին զգում, և ո՞վ է զգացել իր չտեսած բանի պակասութիւնը, որ նրանք զգային: ¹⁾

Փողային տնտեսութիւնը թագաւորում էր միայն քաղաքներում, որտեղ դրամագլուխն ամբողջովին գործադրում էր առևտրական ու արհեստաւորական ձեռնարկութիւնների վերայ. վաճառական դասը գեռ ևս այնքան զօրեղ չէր. չկար արդիւնաբերական գործունէութիւն, չկային գործարաններ:

Քաղաքը գեռ չէր յաղթահարել գիւղին:

Եթէ ըստ Ղազարոս Աղայեանի՝ նահապետական կարգերն ու լիութիւնը թագաւորում էին զիւղաքաղաքում, ապա հասկանալի է, թէ այս դրութիւնն ճրքան իշխող կլինէր անարատ զիւղում:

1) Ղազարոս Աղայեան «Բաժանութիւն»: Տեսէր «Հայ գրողներ» Ա. գիրք. կազմեցին Ղ. Աղայեան, Ա. Սահարեան, Յովհ. Թումանեան եւ Վ. Փափազեան. Թիֆլիս, 1909, եր. 34-35: Բոլոր հատուածների մէջ ընդգծումները մերն են:

II.

Աբովեանի ու Աղայեանի նկարագրած հայ գիւղում «Մարդիկ ապրում էին ինչպէս Աբրահամի օրերում»: Իսկ ինչ դրութեան մէջ է հայ գիւղը Մուրացանի երկերում: Արդեօք հինաւուրց կաղնու արմատներն առնո՞ղ են ու թագուած մայր հողի մէջ: Արդեօք հայ գիւղացին առաջուայ պէս ուրախ երգերով ափսոսում է դաշտը, սերմանում արտօրայքը և անուցանում իւր գաւալներին լիութեան մէջ:

«Հեռուից դիտողն այնպէս է կարծում, — նկատում է քոյր Աննան, «Ժորհրդաւոր միանձնուհու» հերոսուհին, — թէ գիւղացին սովորած լինելով պարզ ու անպաճոյճ կեանքի՝ շատ աննշան էլ կարիքներ ունի, թէ նա միշտ գոհ է իւր վիճակից և թէ առհասարակ նրան շատ քիչ բան է պակասում: Մի բան ճշմարիտ է. այն է, որ գիւղացին տրտնջալու և ամեն անցորդի իւր ցաւերը պատմելու սովորութիւն չունի: Նա գլխակիւր և անմոռնչ աշխատում է, ինչպէս և իւր անասունը: Բայց նա ամբողջովին կազմուած է կարիքներից...: Այն, պէտք է ապրել նրա ընտանիքում, տեսնել եւ շօշափել նրա աղքատութիւնը, ներկայ լինել դաշտում նրա կրած տանջանքներին և չափել այդ տանջանքների գնով ձեռք բերած արդիւնքի չնչին արժէքը, որպէս զի մարդ կարող լինի գաղափար կազմել զիւղացու կարօտութիւնների մասին» ¹⁾

Երբ «Առաքեալի» հերոսը, Պետրոս Կամսարեանը հարցնում է, թէ ինչո՞ւ հայի գիւղը տգեղ ու կեղտոտ է լինում, Զիւլախլուի տանուտէրը պատասխանում է.

«Ախպէր, խայի գեղն կեղտոտ չըլնի, իմալըլնի, խայի գեղացու ցաւը, դարդը մէկ չէ, էրկու չէ, որ թորդի ու յիստակութեան ցաւը քաշի» ²⁾

1) Մուրացանի երկասիրութիւնները, առաջին հատոր. Թիֆլիս, 1904. եր. 303-304.

2) Նայնը եր. 472.

Հայի գեղացու ցաւը մէկ չէ, երկու չէ, բայց բոլոր ցաւերն ու դարձերն առաջանում են օրական հացը դըժ- ուարութեամբ ձեռք բերելուց: Այս դժուարութեան մա- սին գաղափար չունեցողներից մէկը ուզում է իմանալ, թէ ինչն է պատճառը, որ Չիբուխուրն ուսումնարան չունի:

«Գեղականը սրբիան կարայ ուսումնարան հիմնիլ,— նկատում է տիրացու Մոսին, Չիբուխուրի վարժապետը:— Մաղ օրը չարչարուիլով, արևի, անձրևի հետ կռիւ տալով ըսկի կարում չի էնքան աշխատի, որ իրա ընխանց ուղղին հասցնի, եւ նրանց տկլոր լաշը ծածկի, ուսումնարան սնց տի հիմնիլ»¹⁾

Անշուշտ քաղաքում աղքատութիւնը շատ աւելի տա- ժանելի է, քան գիւղում. սակայն պէտք է եզրակացնել, թէ գիւղումն էլ աղքատութիւնն արդէն բաւական սուր կերպարանք է ստացել, որ «նոյի ագռաւի» մէջ գիւղա- կան քահանան, Տէր-Մակուչը անշուշտ մի քիչ չափազան- ցելով ասում է.

«Դժար բան ա աղքատութիւնը, էն էլ գեղի միջումը, Աստօժ ոչ շանց տայ ձեզ. . . »²⁾

Այս բոլորը հաստատում է նաև ուստա Պետին «Ա- ռաքեալի» մէջ:

«Ըստեղ (գիւղում. Թ. Ա.) սնց որ տղամարդը, էնենց էլ կինարմատը սաղ օրը գործ են շինում. չուն ցաւերնին շատ ա, կարիքնին մենծ. պաի անեն, որ ապրեն, ծէրը ծէրին հասցենեն. չանողը կմնայ սոված, նրան ոչ Աստօժ, ոչ էլ բանդէն հաց կտայ: Դրա համար ա, որ ըստեղի մարդը տան սիրունութենի, եւ կարգ ու սարգի վրայ մտածում չի. չուն դէ սոված փորի հմար ամենից առաջ հաց ա հարկաւոր, տկլոր ջանին էլ մի կտոր կտաւ: Դէ մարդ որ էդ էրկու քանը զօռով ըլի ձեռք բերում, էլ ու- ըիչ բանի վրայ սնց կարայ մտածիլ»³⁾

Կասկած չկայ այլ ևս, որ լիութեան դարն անցել է: Գիւղացին գողում է վաղուան օրուայ համար, գոյութեան

1) Մուրաց. երկաւ. եր. 204:

2) Նոյնը եր. 26:

3) Նոյնը եր. 126:

դարհուրանքը տիրել է նրան. խուլ դժգոհութիւնը պա- տել է նրա սիրտը, ինչպէս խեղդող ու կապուտակ ծու- խը՝ կիսափառ խանձողը: Մի ահեղամուռնչ հեղեղ պղտոր ալիքներով բաց է արել հինաւուրց կաղնու արմատներն և նրան մատնել չորանալու վտանգին:

III.

Բայց ինչո՞ւ մարդիկ այլ ևս չեն ապրում ինչպէս Աբ- րահամի օրերում: Ի՞նչն է այս փոփոխութեան պատ- ճառը:

«Առաքեալի» հերոսը, Պետրոս Կամսարեանը այսպէս է խորհրդածում գիւղացիների մասին:

«Բարի մարդիկ են, ազնիւ և աշխատասէր. սեփական շահի համար ոչ ոքի չեն փնտում, այլ ապրում են իրենց ճակատի արդար քրտինքով: Բայց օրովհետեւ տգէտ են և անուսում, ուստի մնում են անգոր աշխարհի չարիք- ների առաջ, օրով և մի կողմից ընութիւնն է նրանց զըր- կում, իսկ միւս կողմից չար մարդիկն են կեղեքում. այդ պատճառով էլ նա վարում է դառն ու չարքաշ կեանք. . . »¹⁾

Բայց հայ գիւղացին առաջ էլ էր տգէտ ու անու- սում, ապրում էր նոյն ընութեան մէջ, առաջ էլ նրա արտերին փնտում էին աւերիչ կարկուտն ու այրող երաշ- տը: Ուրեմն մնում է նրա թշուառութեան պատճառ հա- շուել կեղեքող չար մարդկանց: Բայց ի՞նչ չար մարդիկ են սրանք:

«Եթէ այսօր Հասան-խանի փարրաշները չեն սպառ- նում նրանց, (գիւղացիներին. Թ. Ա.) հօ տգիտութիւնն ու խեղճութիւնը, հօ վաշխառուներն ու օրինազանցները սպառնում են»,—մտածում է գիւղացու ցաւակից Կամ- սարեանը²⁾

Ճիշտ է, պարսից տիրապետութեան օրերում օրի- նազանցներ չկային, սակայն լոկ այն պատճառով, որ օրէնք

1) Մուրաց. երկ. եր. 143:

2) Նոյնը, եր. 88:

էլ չկար, և ուրեմն չարիքն անսահման էր: Բայց ինչո՞ւ այն ժամանակ, երբ բռնութիւնն աւելի շատ էր, գիւղացու տունն Աբովեանի ասելով՝ «ծով» էր, իսկ այժմ՝ դարձել է սակաւաջուր մի առուակ: Ինչպէս օրինազանցներին, այնպէս և վաշխառուներին գիւղացու աշխատութեան հիմնական պատճառ համարել չի կարելի: Վաշխառութիւնը չի կարող զարգանալ այնտեղ, որտեղ մեծ կարիք չկայ: Ինչպէս յետոյ աւելի մանրամասն կտեսնենք, ոչ թէ վաշխառութիւնը պիտի համարել աղքատութեան պատճառ, այլ ընդհակառակը, աղքատութիւնը՝ վաշխառութեան:

Այս ինչի հետեանք է գիւղացիների աղքատութիւնը: Որտեղ որոնենք գիւղացիութեան անկման պատճառը:

Հայ գիւղական դասակարգի անկման պատճառը ոչ նրա տգիտութիւնն է, ոչ խեղճութիւնը, ոչ բնութիւնն իւր արհաւիրքներով, ոչ օրինազանցներն ու ոչ էլ վաշխառուները, այլ այն մեծ յեղաշրջումը, որ տեղի ունեցաւ հայ հասարակութեան կեանքում XIX դարի երկրորդ յիսնամեակի սկզբներում:

Մտրկութեան (ճորտութեան, Թ. Ա.) ազատութիւնը և վերջն էլ դատական վերանորոգութիւնը, գիւղական ինքնավարութիւնը, նորամուտ լուսաւորութիւնը, երկաթուղի, հեռագիր և այլն, — գրում է Ղազարոս Աղայեանը նոյն «Բաժանութիւն պատմութեան» մէջ, — մին մինի յետեւից գալով շրջրին ժողովրդին, մի յանկարծական փոփոխութիւն ձգեցին նրա նիստ ու կացի և վարք ու բարքի մէջ: Ժողովուրդն այնպէս փոխուեցաւ մի տառը տարուան մէջ, որքան փոխուած չէր հարկւրաւոր տարիների ընթացքում: Ինչ որ մի շահի արժէք առաջ, դառաւ քսան շահի և աւելի ևս. փողը շատացաւ, շուկայութիւնն էլ հետը, և այս վերջինը յաղթեց առաջինին: Առաջուան հարկւր մանէթով երջանիկ ապրողը էլ չկարողացաւ հազար մանէթով ապրել: Մի նոր տեսակ գոյութեան կռիւ սկսուեց, անմիտները յանկարծ սատանայացան, խելոքները խորամանկացան, ազնիւները խարդախացան, հաւատարմու-

թիւնը կորաւ, սէրը սառաւ, սեփականութիւնը ձեռքից ձեռք անցաւ և այլն: ¹⁾

Դէպի փողն ու փողատէրը: Ահա թէ ինչպէս էր մտածում այս մասին Գանաքեռցի քեթիւղան:

Այս հատուածից երևում է, որ Աղայեանը լաւ չի գիտակցում, թէ այս յեղաշրջման բազմազան երևոյթների մէջ որոնք են պատճառ ու որոնք՝ հետեանք, բայց այնուամենայնիւ տալիս է տնտեսական ու բարոյական յեղաշրջման բնորոշ գծերը:

«Երկաթուղի, . . . հեռագիր . . . փողը շատացաւ . . . սեփականութիւնը ձեռքից ձեռք անցաւ . . . »:

Այս ծիծեռնակները ցոյց են տալիս, որ մթնոլորտում եղանակի փոփոխութիւն է կատարուել: Բնական, փակ տնտեսութեան դարն անցել է, լիովին յաղթանակել է փողային տնտեսութիւնը. գիւղն ու քաղաքն երկուսն էլ մէջ են. ծնւում է հարկւրգլխեան Հիդրան — ամենակուլ կապիտալիզմը:

Բնական, փակ տնտեսութիւնից փողային տնտեսութեան անցնելը գիւղացի դասակարգի համար օրհասական նշանակութիւն ունի: Այս այն յեղաշրջումն է, որ գիւղացիութեան անկման պատճառ է դառնում:

IV.

Տեսնենք, թէ բնական տնտեսութիւնից փողային տնտեսութեան անցնելն ինչպէս է գիւղացիութեան անկման պատճառ դառնում:

Բնական տնտեսութեան ժամանակ գիւղացին արտադրում էր ոչ թէ շուկայի, այլ իւր համար, հարկաւոր իրերի մեծ մասն ինքն էր պատրաստում ընտանիքի հետ միասին, իսկ պակասը լրացնում էր փոխանակութիւնով, որը կատարւում էր ոչ թէ փողով, այլ իրերով: Բնական տնտեսութեան ժամանակ թէ սպառման ու թէ փոխանակութեան համար գիւղացուն հարկաւոր էր միմիայն բերք. բերք չառ ունի — հարուստ է, փող չունի, — դեռ ևս

1) «Հայ գրողներ» Ա. հատոր, եր. 55

աղքատ չէ: Հասկանալի է, որ բնական տնտեսութեան շըր-
ջանում փողի պակասութիւնն երբեք չի անհանգստացնում
ներան. ընդհակառակը, գիւղացին արհամարհանք է տածում

«Տաշտումը հաց ունենամ, կարասումը՝ գինի, շուա-
ռումն՝ ալիւր, հէրն անիծած, որ չիւփ-չիւփաղ էլ ըլիմ
դարդ անեմ: Օղաղս լիքը ըլի, տանս՝ բարաքեաթ, որդիքս՝
սաղ սալամաթ, թող օրը հազար մարդ մտնի, հազար մարդ
դուս գայ, ինչ եմ հոգում. հացն Աստուծունն ա, ես էլ
հետը, ով հասնի, թող ուտի: Տէրին փառք, տեղը հլա
շատ կայ, տղէքս սաղ ըլին, ջանս ապրի. Աստուած իր
ստեղծած բանդի ուղղը ինչպէս կը կտրի: Գտակա ծուռը
կգնեմ, քէֆս արամիշ կանեմ. ով թամբալ ա, թող նա
դարդ անի»: 1)

«Փողի բարաքեաթին էլ նալաթ, իրա կտրողին էլ:
Էսօր ջէրդ լցնես, էգուց պէտք է մատդ լպտես: Ոչ գի-
շերը քունդ ա տանում, ոչ ցերեկը՝ դարարդ: Փորացաւ
ընկածի պէս մարդ չի իմանում, թէ թիքէն որ կողմովն
ա գնում: Փողը որ կայ, ձեռի կեխտ է. էս օր կայ, էգուց
Աստուծով մխիթարիս: Մեռնիս պէտք է չներսոյ, գէլերոց
ըլի. թէկուզ փողի համն առած, թէկուզ իր միսը կերած,
հէսաբը մէկ ա... 2է, չէ, փողի սիքէն ճանաչողը ոչ հո-
գի ունի, ոչ հաւատ: Փող-հող մին ա: Զարգար Պ. որ շատ
փող ունի, հէնց էն ա, ինձանից մէկ թիղ բարձրացել ա
ու լաւ ա ապրում: Նրա քօռ աչքը գիտենայ: Շատ ֆիքր
անելուցը երեսը կաշին գնացել, չփա դառել, քամակն
էկել, փորին դէմ առել, առամները ցից-ցից մնացել, աչ-
քերը կուլ գնացել, մէկ որ փչես, հազար տեղ գունտ ու
կծիկ կըլի, մէկ որ քթին հուպ տաս, հոգին էն սհաթը
կտայ... Թճճ, մարդ իրան հոգին պէտք է ծախի, որ
փողին թամազ անի»: 2)

Այսպէս չի կարող դատել գիւղացին փողային տնտե-
սութեան շրջանում:

Փողային տնտեսութեան ժամանակ փոխանակութիւնը

1) «Վերք Հայաստանի», եր. 57:

2) Նոյնը, եր. 56—58:

կատարում է փողով, այսինքն մի այնպիսի իրով, որից
կարելի է անչափ հաւաքել և որը միշտ կարելի է փոխա-
նակել մի ուրիշ իրի հետ, մինչդեռ ապրանքը կարող է
սպառող չունենալ: Փողային տնտեսութեան ժամանակ
գիւղացու հետ գործ ունեցողները, օրինակ՝ տէրութիւնը,
հիւանը, դարբինը և այլն, այլ ևս բերք չեն վերցնում իր-
րեւ հարկ կամ աշխատավարձ, այլ փող են պահանջում:
Գիւղացին ուզում է ունեցածը տալ, նրանք ուզում են
չունեցածն առնել: Բնականաբար առաջ է գալիս փող ձեռք
բերելու ձգտում:

Փող ձեռք բերելու մեծ ձգտումն ստիպում է գիւ-
ղացուն իւր ու ընտանիքի ոյժը գործադրել բերք շատ ար-
տադրելու վերայ. տնային ու դաշտային շատ աշխատանք-
ներ ընդհատում են և աշխատանքը կենդրոնացնում այն
նիւթի արտադրութեան վերայ, որ ամենից աւելի արդիւ-
նաւետ է: Իսկ այն նիւթերը, օրինակ, բուրգ, կաշի և
այլն, որոնց վերայ աշխատանք էին գործադրում և սե-
փական սպառման առարկայ դարձնում, այժմ՝ վաճառ-
ւում են: Նշանակում է՝ գիւղացին այժմ ոչ միայն տէ-
րութեանը կամ արհեստաւորին վճարելու համար փող
պէտք է ունենայ, այլ և փող պէտք է վճարէ այնպիսի
առարկաների համար, որ առաջ ինքն էր արտադրում՝ ու
սպառում: Մեծանում է փողի կարիքը, սրա հետ մեծա-
նում է գիւղացու կախումը շուկայից:

Բնական տնտեսութեան ժամանակ գիւղացին
կախում ունէր բնութիւնից: Փողային տնտեսութեան ժա-
մանակ գիւղացին կախումն ունի թէ բնութիւնից և թէ
շուկայից: Բնական տնտեսութեան ժամանակ բերք ունե-
ցողը հարուստ էր, իսկ փող չունեցողը դեռ ևս աղքատ
չէր: Փողային տնտեսութեան ժամանակ, ընդհակառակը,
փող չունեցողը աղքատ է, իսկ բերք ունեցողը դեռ ևս
հարուստ չէ: Փողային տնտեսութեան հակասութիւններից
մէկն է այս. լինել ունեւոր, բայց միաժամանակ ոչ հարուստ:
Գիւղացին հարուստ կը լինի այն ժամանակ, երբ բնու-
թեան առատաձեւութեան հետ միասին շուկայի պայ-

մաններն էլ բարեյաջող լինին: Այսպիսի զուգադիպութիւն սակայն յաճախ չի պատահում: ¹⁾

«Փող», փող ու փողը, — սկսում է բացականչել գիւղացին, որի գոյութիւնն այժմ կախուած է շուկայից: Եւ որովհետեւ արտադրող գիւղացին փողի կարիք ունենալիս մրցողների շատ լինելու պատճառով բերքին լաւ գին տուող ու սպառող գտնել չի կարողանում, ուստի ստիպուած է լինում աժան վաճառելու, որով հնարաւորութիւն չի ունենում բոլոր կարիքներին բաւարարութիւն տալ և ակամայից գիժում է պարտքի: Իսկ եթէ չի կամենում բերքն աժան վաճառել, պահում է յարմար ժամանակի. բայց այս դէպքումն էլ գիւղացին հարկադրուած է լինում պարտք վերցնելու: Պարտքն էլ, յայտնի է, պտուտող անիւ է. բաւական է, որ փէշից բռնեց. վաղ թէ ուշ քարշ է տալու ու փշրելու ամբողջ մարմինը: Հետեւեալը լինում է այն, որ գիւղացին կամ դառնում է պարտատիրոջ ճորտը և կամ հողից զրկուած պրոլետար:

Փողային տնտեսութիւնն ազդում է նաև հողային սեփականութեան ծաւալի վերայ: Փողի ծարաւն ստիպում է գիւղացուն, որքան կարելի է, շատ հող ցանել: Գիւղացիներն սկսում են հետզհետէ վարել «ազատ դաշտերն ու ազատ ձորերը»: Զգացւում է հողի սակաւութիւն. սկսում է հողի տիրապետութեան համար մրցում: Այս

1) Հետեւեալ աղիւսակն աւելի կպարզէ մեր միտքը. թէ, յիշելի, փողային տնտեսութեան ժամանակ գիւղացու կացութիւնն-աւելի դժուարին է:

I. ԲՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ.

1. Բնութիւնն առատածեղն է, — — գիւղացին հարուստ է.
2. » ժլատ է, — — » աղքատ է.

II. ՓՈՂԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ.

1. Բնութիւնն առատածեղն է. շուկան բարեյաջող, գիւղացին հարուստ է.
2. » ժլատ է, » բարեյաջող, » աղքատ է.
5. » առատածեղն է, » անբարեյաջող. » աղքատ է.
4. » ժլատ է, » անբարեյաջող, » աղքատ է:

Մինչդեռ բնական տնտեսութեան ժամանակ գիւղացու լաւ պայմանները յարաբերում են վատերին, ինչպէս 1: 4-ին, փողային տնտեսութեան ժամանակ յայտարարում են ինչպէս 4: 5-ին:

կուում, ինչպէս և ամեն կուում, յաղթանակը տանում են աշխարհիս հզորները. թողլերը զրկուում են հողերից և Աղայեանի բառերով ասենք, «սեփականութիւնն անցնում է ձեռքից ձեռք»:

Իհարկէ, գիւղացիական մասսայի բոլոր անդամները հաւատարապէս ենթակայ չեն այս վիճակին: Ոմանք կարողանում են բարեյաջող հանգամանքների շնորհիւ խուսափել անկումից ու որոշ չափով բարօր դրութիւնը պահպանել: Հարեանքների ազդատութիւնը նպաստում է նրանց հարստութեանը: Այսպիսիները գիւղում հանգէս են գալիս. նախ իբրև պարտատէր և ապա իբրև մեծ հողատէր:

Եւ այսպէս, երբ փողային տնտեսութիւնը ներս է մտնում դռնից, գիւղացու բարօրութիւնը դուրս է թռչում երգիկից: Ողբեմնի փայտեայ ձին պատճառ է լինում Տրոյայի կործանման: ¹⁾

V.

Մտերացանի երկերը ցոյց են աւելի, որ հայ գիւղն իսկապէս ճնշում է փողային տնտեսութեան ծանրութեան տակ:

1) Փողային տնտեսութիւնը վնասում է ոչ միայն գիւղացի, այլ եւ ազնուական դասակարգին: Դեռ եւս Ք. Ա. VI դարում յոյն բանաստեղծներից մէկը, Թէոգնիդ Մեգարացին այսպէս է բողոքում փողային տնտեսութեան յաղթանակելու դէմ:

«Մինչև անգամ խոյրի, էշերի ու ձիերի միջից, ո՛վ Կիրն, միշտ ջոկում ենք ազնուացեղը եւ բոլորիս էլ ընտիր ցեղից սերուածն է ցանկալի»:

Բայց ազնուական տղամարդը ամենեւին վատ բան չի համարում վատտոռոմիկին կին առնել, եթէ միայն սա իւր հետ փող չատ է ուերում:

Կինն էլ չի քաշում վատտոռոմիկի ամուսին լինել, եթէ միայն սա հարուստ է. հարուստն աւելի սիրելի է նրան, քան ազնուականը:

Ամենքն էլ փողին են պատիւ տալիս. ազնուականը հասարակին է կին առնում, իսկ անտոռոմիկն էլ ազնուականի աղջկան. այսպէս փողը հաւասարեցրել է տոհմերը:

Ել այսուհետեւ մի զարմանար, ո՛վ Պոլիպայի որդի, որ մեր ազնուական քաղաքացիների տոհմը ոչնչանում է. չէ՛ որ մեզանում առաքինութիւնն սկսուել է խառնուել մոլութեան հետ:

А. и М. Краузе. «Руководство по истории греческой литературы» часть I, пер. С. И. Радцига. Москва, 1907, стр. 145.

Խօսելով այն մասին, թէ ինչպէս դժուարութեամբ էր գիւղականը ապրուստ ճարում, աշխարհ տեսած ուստա Պետին աւելացնում է.

«Այ, ուրիշ ա ձեր քաղքի բանը, ընտելփողը չիր ա. էնքանը բիրդան ոնց են հւաքում, գիտում չեմ, միան էս կայ որ, մինը թէ աշխատումա, տասը մոլֆթա են ուտում. ոչ ջաֆա կայ, ոչ նեղութիւն» 1)

Ուրեմն գիւղացու թշուառութեան պատճառն այն է, որ գիւղում «փողը չիր չի», որովհետեւ հեշտութեամբ չեն կարողանում ձեռք բերել: Կար մի ժամանակ, երբ գիւղացին առանց այս «չրի» էլ լի կեանք էր անցկացնում, բայց այժմ առանց նրա ոչինչ չի կարելի ճարել:

Փողային տնտեսութիւնն այնքան է դարգացել գիւղում, որ ոչ միայն տէրութեան հարկը, արհեստաւորի վարձը, գործարանային ապրանքների գինը, այլ և սերմացուի արժէքը գիւղացին փողով պէտք է վճարէ:

«Մարդը սովածա էլել, — ասում է Խոջա Միրզան, — փող եմ տուել, սերմացու ա առել. ցանել ա, հնձել ա, չորս տարի ապրել ա...» 2)

Պետրոս Կամսարեանի նկատողութեանը, թէ ինչու խրճթի առաստաղը ծուռ ձողերից է շինած, մինչդեռ կարելի էր լայն տախտակներից պատրաստել, հիւրընկալ գիւղացին, Զիբուխուի տանուտէրը, պատասխանում է,

«Շատ զորթ ես հրամայում, աղա, զորթ որ էն ձողերի տեղ թէ տախտակ հըլնէր, շատ լաւ կըլնէր. համ խող չէր թափուի, համ էլ յառիքը սիրուն կըլնէր: Համա մէ բան կայ, որ դու չես գինայ. շինականի խամար մէ մանէթը էնդղղա աժի, ինչդղղա քաղքցու խամար խարիր մանէթը: Էսղղա տեղը տախտակելու խամար եռսուն մանէթ խէրիք չէր գայ, համա ես էս հըմէնին չորս մանէթ եմ տուել, էն էլ անջախ եմ ճարել» 3)

Երբ նոյն Կամսարեանը զարմանում է, որ մալականները

1) Մուրացանի երկաս. եր. 204:

2) Նոյնը, եր. 293.

3) Նոյնը, եր. 484:

փայտ են վառում, իսկ հայ գիւղացիները՝ աթար, ուստայ Պետին բացատրում է պատճառը:

«Նրանք հարուստ են, մենք աղքատ: Էն փողը, որ պտի տանք փէտի, տալիս ենք մի ուրիշ պակասութենի. օրինակ մի ձի ենք առնում, որ մեզ հմար բան անի. ես կով ենք ձեռք բիրում, որ նրա կաթով ըբխանցը պահենք. ես չէ չորի, փալասի ենք տալի, որ մեր տանեցոնց տկլորութիւնը ծածկենք. պակասութիւն չան. ես ի՞նչ միսն ասեմ?» 1)

Գիւղական մի ընտանիք վերահաս կործանումից ազատելու, վերջնական անկումից փրկելու համար հարկաւոր է 131 ուրբու չափ մի գումար, բայց ամբողջ գիւղում անհնարին է գտնել այսքան փող:

«Մեր էն խեղճ Սային... Բա էրէկ չասի, թէ Խոջան հրաման ա բերել, որ նրա էլած չէլածը ծախի: Այ, հմի պրիտաւը վէ կալած էկել ա, խեղճի տունը կտրել: Փանի մարդիկ մէջ ընկան, խնդրեցին, աղաչեցին, թէ մի քիչ էլ ա մոհլաթ տայ. ասաւ. «տալ չեմ. փողս բիրէք, տուէք, պրիտաւին վեր ունեմ, գնամ. թէ չէ, ինչ ունի, չունի, պտի վեր գրեմ, ինչ կլի, կնկանը չորերն էլ...»: Դէ մենք փող որդիան գտնենք էս սհաթին. Գեղականի ջանումը հալա մնացել, որ հւաքի, տայ» 2)

Փողի մեծ կարիքն ստիպում է նոյնիսկ սեփական տնտեսութիւն ունեցող մարդկանց ուրիշի մօտ աշխատանք որոնել, իսկ տնտեսութեան հոգսը թողնել կանանց ու երեխաների վերայ:

«Տենում ես, — մասնացոյց արաւ Պետին աշխատողների վերայ, — սրանք Աւանանց ըբխէքն են. Հէրը մննծ տղի հետ հրէն հանդումը ուրիշի հունճն ասնում, թէ ինչ ա, կարայ մի քանի շահի տուն բերել. ըստեղ էլ կնիկն ու աղջկերքը իրանց կալն են կալում: Զորսն էլ կինարմատ են, պստիկն ա տղայ. ամա դէ գիփ էլ տղամարդի գործ են շինում» 3)

1) Մուրացանի երկաս. եր. 213:

2) Նոյնը, եր. 282:

3) Նոյնը, եր. 208:



Հայ գիւղացին տքնում ու ճգնում է փող ձեռք բերելու համար. բայց մամոնան ձկան պէս լարծում է նրա մատերի արանքից և ստուերի պէս փախչում նրա առաջից: Ճանտալուսը տեսնում է պտուղներով ճթռած ոստը, սակայն իզո՛ւր, մի փոքրիկ շարժումն, և ահա հրապուրիչ ոստն օրօրւում է բարձրում:

VI.

Փոխանակութեան զարգացումը գիւղում մեծ կարիք է առաջացրել. գիւղացիները պատրաստ են պարտք վերցնելու, ինչ պայմանով ուզում է լինի: «Գայլն ինչ կուզի, —մութը գիշեր»,—ասում է ժողովրդական առածը: Հարուստ գայլերին էլ հէնց այսպիսի մութ գիշեր է հարկաւոր անդոր գառներ, յուսահատ սպառողներ գտնելու համար: Եւ խուժում են արիւնարբուները գիւղ. սկսւում է անխիղճ վաշխառութիւնը:

«Եթէ այսօր Հասան խանի ֆարրաշները չեն սպառնում նրանց, հօ տգիտութիւնն ու խեղճութիւնը, հօ վաշխառուններն ու օրինազանցները սպառնում են նրանց», —խորհում է Կամսարեանը: ¹⁾

«Կեղեքիչներից ու վաշխառուններից զատ դեռ մինչեւ այսօր ոչ ոքի չեն տեսել իրենցմով հետաքրքրուելիս», —նկատում է Թարսաչայի պոստի վերակացուն, «անասունների վարժապետը»: ²⁾

«Եւ սակայն ի՞նչքան շատ կային այդպիսի (վաշխառունների ձեռքին գերի. Թ. Ա.) թողնուած ու լքուած տներ և ընտանիքներ, —խորհում է տխրութեամբ Պետրոս Կամսարեանը, որից իմանում ենք, որ վաշխի աւերածութիւնները գիւղում մեծ չափերի է հասել: ³⁾

1) Մուրաց. երկաս. եր. 445:

2) Նոյնը, եր. 447:

3) Նոյնը, եր. 500:

Ուշագրութեան արժանի է ոչ միայն վաշխառութեան զոհերի քանակը, այլ և վաշխառութեան օրակը:

Վաշխառութիւնը երկու տեսակ է լինում. փողով վաշխառութիւն, երբ պարտք են տալիս փող ու պիտի ստանան փող, և բնական բերքերով վաշխառութիւն, երբ պարտք են վերցնում բերքեր, որպէսզի յետոյ դարձեալ բերք վճարեն: Սխալ կլինի կարծել, թէ բերքով ու փողով վաշխառութիւնը հաւասար ազդեցութիւն են գործում գիւղացու տնտեսութեան վրայ: Բերքով վաշխառութեան լուծն ընդհանրապէս աւելի թեթեւ է գիւղացու համար. եթէ տարին բարեյաջող եղաւ ու բերքն առատ, նա հեշտութեամբ կարող է պարտքն ու վաշխը վճարել: Մինչդեռ փողով վաշխառութեան ժամանակ գիւղացու՝ առատ բերք ունենալը դեռ ևս հնարաւորութիւն չէ տալիս նրան պարտքից ազատուելու. որպէզի նա ազատուի վաշխառուի ճանկերից, պէտք է թէ բնութիւնն առատաձեռն և թէ շուկան բարեյաջող լինեն: Ասածներս ճիշտ է ինչպէս գիւղացու, այնպէս և կալուածատէր ազնուականի վերաբերմամբ:

Հնում շատ լաւ էին գիտակցում բերքով ու փողով վաշխառութիւնների մեծ տարբերութիւնը:

«Հին հովմայեցի հեղինակները, —գրում է մեծատաղանդ Բելտովը, —եռանդագին բողոքում էին վաշխառութեան դէմ: Կատոն ցենզորի կարծիքով վաշխառուն գողից երկու անգամ վատ է (հէնց այսպէս էլ ասում էր ծերունին, ուղիղ երկու անգամ): Այս խնդրում հեթանոս հեղինակների հետ բոլորովին համամիտ էին քրիստոնէական եկեղեցու հայրերը: Սակայն —նշանաւոր երևոյթ —թէ սրանք և թէ նրանք բողոքում էին փողային կապիտալի բերած տոկոսի դէմ: Իսկ բերքերով փոխատուութիւններին ու սրանցից ստացուած վաշխին անհամեմատ աւելի մեղմ էին վերաբերւում: Ի՞նչն էր այս տարբերութեան պատճառը: Այն, որ փողային վաշխառուական կապիտալը սարսափելի աւերածութիւններ էր գործում այն ժամա-

նակուայ հասարակութեան մէջ. այն, որ հէնց այս կապի-
տալը «կորստեան մատնեց իտալիան»¹⁾

Վաշխը կարիքի զաւակն է. ինչպէս կարիքն է, այն-
պէս է և վաշխը. Որտեղ փողի կարիք չկայ, այնտեղ փողի
վաշխառութիւն զարգանալ չի կարող: Օրինակ, Աբովեանի
գիւղացին անշուշտ չէր ընկնի փողով վաշխառուի ճիրան-
ների մէջ: Իսկ որտեղ փողի կարիք կայ, փողով վաշխա-
ռութիւնը գործում է, ինչպէս բոցավառ հուրը աշնանա-
լին շամբի մէջ:

Նշանակում է՝ գիւղի աղքատութեան հիմնական
պատճառը վաշխառութիւնը համարելը մեծ մոլորութիւն
է: Բարդ մեքենայի շարժումների պատճառը ոչ թէ մեծ
կամ փոքր անիւներն են, այլ այն ոյժը—շոգին կամ ել-
եքտրականութիւնը, որ գործում է մեքենայի մէջ, բայց
չի երևում գիտողի աչքին:

Գիւղացի դասակարգի անկման պատճառը ոչ թէ
վաշխառութիւնն է, այլ փողային տնտեսութիւնը, որ փողի
կարիք առաջացնելով պարարտ հող է պատրաստում
փողով վաշխառութեան համար:

1) Н. Бельтовъ. «Къ вопросу о развитіи монастическаго
взгляда на исторію. СПб, 1906, стр. 435: Փողով վաշխառութեան
հակառակ են նաեւ Հին ու Նոր Կտակարանները: Մխիթար Գօշը «Գատաս-
տանադիրը Հայոց»-ի Բ. մասի ԽԶ. յօդուածով նոյնպէս արգելում է
փողով վաշխառութիւնը:

«Հին կտակարանս եւ Նորս յայտոսիկ միարանին ի բաց բառնալ
զվաշխ եւ զտոկոսիս. ոչ աստ տոկոսի յիշատակելով զվաշխ թողացուցանէ,
զի զծայրն բառնալով ընդ նմին եւ զարմատն բառնայ: Եւ որ ինչ ի Նոր
կտակարանս է սասան, աւելորդ է իբր զիտողաց երկրորդել, զի թէ եւ՛
օրէնքն ոչ հրամայէ ճեպել, ո՞րչափ եւս նորս: Եւ փոխ ասացաւ. զի ան-
դրէն հատուցի զլուխն. Աւգ իրաւունք դասասանի լիցիքն ցերմամբ
առնուլ գլուխն, եւ վաշխ լիցի՝ հասուցումք հանդերձեալ: Ապա
թէ կար իցէ փոխառողին, տացէ փոխատուին զնոյն զլուխ մնալ առ նմա
զնոյն չափն եւ այդ ըստ կարի լիցի, զի Աստուծոյ իցցն իսկ է դա-
սասանդ՝ ոչ առնուլ վաշխ եւ տոկոսի: . . .» Մխիթար Գօշի
«Գատաստանադիրը Հայոց» Վաղարշապատ, 1880, եր. 337:

VII.

Մուրացանի նկարագրած հայ գիւղում «սերմանում է»
փողով վաշխառուն:¹⁾

Այս «հատիկները» չեն թափւում ոչ ճանապարհի վրայ,
ոչ էլ քարքարոտ տեղ, ոչ էլ փշերն են խեղդում՝ նրանց,
այլ բոլորն էլ ընկնում են փափուկ հողի մէջ և վաղվա-
ղակի բուսնելով տալիս են մէկին տասը, մէկին քսան,
մէկին երեսուն ու աւելի:

Սկզբում «սերմանում է» քաղաքացին:

«Գիւղացին քաղաքում պարտք է վերցնում տոկոսով
և... յաւիտեան ստրուկ մնում վաշխառուի ձեռքին: Այնու-
հետեւ նրա տունը, տեղը, անասունը, այգին վաշխառուի
ստացուածքներն են: Պարտապան գիւղացին դողալով է
իւր պարտատիրոջ երեսը տեսնում: Նրա տարած ընծա-
ները՝ կաթ, ձու, մածուն, կարագ կամ հաւ, որ նա շա-
րունակ իւր երեխաների բերանից է խլում, վաշխառուն

1) Փողով վաշխառութեամբ է պարապում նաեւ «աղէն» Յ. Յով-
հաննիսեանի «գիւղի ժամը» անունով յայտնի բանաստեղծութեան մէջ:

Ա՛խ, Նազլու ջան, չէ՞ս իմանում՝

Եղուց էլի աղէն կդայ:

Նրա սիրտը միշտ անկշտում,

Եւ ամպի պէս պիտի գողայ:

«Շուտով, Գրեգոր, փողերը բե՛ր,

Ելի՛ չկայ, կովդ հանի...»

Ա՛խ, Նազլու ջան, այն լի՛նջ բան էր,

Միտք է հերու... Տէր, դու փրկի:

Հայրիկդ արդէն գնացել է,

Ու փող ճարի. ե՞րբ պիտի դայ:

Տեսնենք, մէկը խղճացե՛լ է...

Ա՛խ, ու օրը Տէրն էլ չտայ:

Յովհաննէս Յովհաննիսեան. «Բանաստեղծութիւններ» Մոսկուա,
1887, եր. 59—40:

ընդունում է իբրև իրեն հասանելի եկամուտ, սակայն առանց զիջացու պարտքից մի սև փող իջեցնելու: ¹⁾

Առատ է վաշխի հունձը, գիւղի քահանան անգամ մտածում է վաշխով հունձ անելու մասին: «Նոյի ագռաւի» մէջ երկտասարդ Մինարեանի հարցին, թէ ինչո՞ւ եկեղեցու բակում պարտէջ չի տնկուած, Տէր-Մակուչը պատասխանում է.

«Ախար ըստի հող փորելու, ծառ տնկելու, չափար քաշելու հրմար փող ա հարկաւոր թէ ո՛չ: Ես ես փող որդիան գլխեմ. փող որ ունենամ, խի ղհնց դատարկ բաների կտամ, հրէն, այ, խոջա Մարութը թումանին երեք շահի շահ ա տալիս (180/0), առում ա. «Մ. գէր, թէ որ հարկւր մանէթ բերես, քեզ տարին տասնութ մանէթ շահ կտամ: Տասնութ մանէթը գիւղնա, մի տուն քիւլփաթ կկառավարի, ամա հարկւր մանէթն ինձ ով ա տուել:» ²⁾

Տէր Մակուչից պարտք ուզողը մի վաշխառու է: Բայց ինչո՞ւ վաշխառուն փոխանակ պարտք տալու՝ ուզում է ուրիշից վաշխով պարտք վերցնել: Միթէ նա մի ապաշխարող գայլ է, որ խիղճն հանգստացնելու համար իր կաշին ուզում է յանձնել ուրիշի ատամներին: Ո՛չ, փողի պահանջը գիւղում այնքան մէծ է, որ Խոջա Մարութի ունեցած փողը չի բաւականացնում վաշխով պարտք տալու համար, ուստի նա սրանից-նրանից համեմատաբար փոքր տոկոսով առնելով աւելի մեծ տոկոսով տալիս է մի ուրիշի:

«Գնացի, Խոջա-Մարութից էրկու հարիւր մանէթ պարտք արի թիւմանին մի աքասի շահով (240/0) ու մին ամիս ժամանակով», — յիշում է Վեդունց Սարգիսը: ³⁾

Կան և աւելի քաջագործները: Սրանցից մէկն է և Խոջա Միրզան, որի մասին «Առաքեալի» մէջ բաւական ըն-

1) Մուրացանի երկասիրութիւնները, Ա. հատոր եր. 522:

2) Նոյնը, եր. 25:

3) Նոյնը, եր. 69:

դարձակ պատմում է Մուրացանը: ¹⁾ Այս վաշխառուն մի խեղճ գիւղացու, ծերունի Սայուն պարտք էր տուել 20 բուբլի և չորս տարուց յետոյ պահանջում էր 131 բ. 7 կոպէկ... (600/0):

«Ես լաւութիւն եմ արել, հօ վատութիւն չեմ արել, — բացականչում է գիւղի բարերարը. — Մարդը սոված ա էլել, փող եմ տուել. սերմացու ա առել, ցանել ա, հնձել ա, չորս տարի ապրել ա...» ²⁾

«Հրէն ուրիշները մի աւնումը մանէթին 10 ես 12 կոպէկ են առնում» (120 և 1440/0). ես 5 եմ հաշուել. սրանէ էւել խղճմտանքով բան կըլի:» ³⁾

Մուրացանի երկերից հանած այսքան հատուածները պարզ վկայում են, թէ հայ գիւղը ինչ դրութեան մէջ է:

Արժեքների նկարագրած հայ գիւղը մի ծաղկած այգի է, որի ծառերի ոստերը գաղանաբար ջարդել ու կտրատել է հրոսակը: Մուրացանի նկարագրած հայ գիւղը ձմեռնաժուտի պարտէջ է. գետինը սառել է, արմատները՝ դոսացել, դեղնատերև սաղարթը մահաշունչ սոսափին է արձակում...:

«Առաքեալի» հեղինակի պատկերացումը ամենեւին չափազանցութիւն չէ:

Մի մասնագէտ գիւղատնտես շրջելով գաւառները հետեւեալ մույլ գոյներով է նկարագրում հայ գիւղերի դրութիւնը:

«Հողը քիչ, չափազանց քիչ, ուժասպառ, հալից ընկած: Անասունը քիչ, վտիտ, սոված, անոյժ, անկաթ:

Դրանց տէրը, դրանցով ապրողը տգէտ, թշուառ, իր հողից էլ ուժասպառ, իր անասունից էլ սոված ու վտիտ: Ողջ երկիրը ամայի...:

Մենք անցնում էինք կուլտուրական անապատների մի-

1) Մուրաց. երկաս. եր. 282—298:

2) Նոյնը, եր. 295:

3) Նոյնը, եր. 292:

ջով, կենդանի մարդկանց գերեզմանների միջով...

Եւ մեծ, անծայր, անվերջ էր այդ գերեզմանը. Դա ժամանակակից հայ գիւղացիութիւնն էր, հայ գիւղն էր, անտէր, սոված, ուժասպառ հայ գիւղը և նրա հանգերը»¹⁾

Փողը տիրել է հողին. գիւղը թալրաւում է քաղաքի ցանցերում:

Արամազդը, լիութեան ու պարարտութեան ծերունի աստուածը, ծնկաչոք հեկեկում է քրքջացող ու յաղթական հերմէսի առաջ:

VIII.

Երբ տնտեսութիւնը զարգանում է, առաջանում են նոր կարիքներ. նոր կարիքների գոյութիւնն իւր վրայ է դարձնում մարդկանց ուշադրութիւնը, այսինքն ուղղութիւն է տալիս հասարակական մտքին. միտքը հնարում է միջոցներ կարիքները լրացնելու համար, որով և ասպարէզ են գալիս հասարակական գործունէութեան նոր իգէալներ:

Հասարակութեան կացութեան յեղաշրջմանը յաջորդում է մարդկանց գիտակցութեան փոփոխութիւնը:

Իգէալը հլու քայլում է մատերիայի յետևից:

Տեսանք, որ տնտեսութեան զարգացումը գիւղում առաջացրել է նոր կարիքներ. այս կարիքներին բաւարարութիւն տալու միջոցներ պէտք է փնտռուէին, պէտք է կազմուէին գիւղին ծառայելու ծրագիր ու գործունէութեան նոր իգէալ:

Եւ, իրօք, Մուրացանի վերոյիշեալ երկերը քննելով նկատում ենք, որ նրանք ոչ միայն պատկերացնում են գիւղի թշուառ դրութիւնը, այլ և պարունակում են հասարակական գործունէութեան նոր իգէալ ու գիւղը փրկելու ծրագիր:

1) Ա. Ա. Թանասեան. «Բոլորիս ուշադրութեանը». «Մշակ» լրագիր, 1910, № 448:

«Քաղաքներին կեանք մատակարարողը գիւղն է, ինչպէս և ազգի կենդանութեան ոյժ տուողը՝ գիւղացին: Ով որ ընդունակ է ազգի կենդանութիւնը զօրացնել, նա պիտի գիւղը դայ գործելու, զի ծառը ջրելու և ուռնացնելու համար նախ նրա արմատները պէտք է յագեցնել...¹⁾

«Առաքելի» ու «Խորհրդաւոր միանձնուհու» մէջ ամփոփուած է այս «արմատները յագեցնելու» ծրագիրը:

Տեսել ենք արդէն (III գլուխ), որ Մուրացանի հերոսները գիւղացու թշուառութեան պատճառ համարում են բնութիւնն ու չար մարդկանց. վերջիններս երկու տեսակ են. օրինազանցներ ու վաշխառուներ: Բնութիւնը, վաշխառուներն ու օրինազանցները գիւղացուն կարողանում են վնասել այն պատճառով, որ սա տգէտ է ու անուսում. ուրեմն գիւղի անկման պատճառներից մէկն էլ տգիտութիւնն է:

Նշանակում է՝ գիւղի թշնամիներն են.

1. Տգիտութիւնը,
2. Օրինազանցները
3. Վաշխառուները և
4. Բնութիւնը:

Սրա համաձայն էլ գիւղում մղելիք պատերազմը կազմուած է չորս առանձին ճակատամարտերից.

1. Կռիւ տգիտութեան դէմ կամ գիւղական հասարակութեան լուսաւորութիւն,
2. Կռիւ օրինազանցների դէմ կամ գիւղացու իրաւաբանական պաշտպանութիւն,
3. Կռիւ վաշխառուների դէմ կամ փոխարդարձ օգնութեան հաստատութիւնների հիմնադրութիւն և
4. Կռիւ բնութեան դէմ կամ գիւղական տնտեսութեան բարւոքումն: «Կռիւներից» իւրաքանչիւրը, հարկաւ, ունի իւր յատուկ «զէնքերը»:

1. Տգիտութեան դէմ կռւելու կամ գիւղական հա-

1) Մուրացանի երկասիրութիւնները, Ա. ճատոր, եր. 307:

սարակութիւնը լուսաւորելու համար պէտք է գիւղում կանոնաւոր դպրոցներ հաստատել, գեղջուկ մանուկներին ձրի ուսում մատակարարել, մանկական-ժողովրդական գրադարան հիմնել, և հասակաւոր գիւղացիներին ազատ ժամերում և մանաւանդ ձմեռ ժամանակ օգտներում կամ եկեղեցիներում՝ դասեր խօսել և աշխարհի չար ու բարիի հետ նրանց ծանօթացնել:¹⁾

2. Օրինազանցների դէմ կռուելու կամ գիւղացուն իրաւաբանական պաշտպանութիւն ցոյց տալու փորձն ամփոփում է իւր մէջ հետեւեալ խնդիրները. գիւղացու կալուածքները յափշտակութիւնից ազատել, հարկահանութեան ժամանակ տեղի ունեցող անարդարութիւններն արգելել, գիւղացուց յաճախ անտեղի կերպով պահանջուող կողմն ու ձրի մշակութիւնը մերժել տալ և, վերջապէս, պաշտօնի մէջ ի վնաս գիւղացու՝ զեղծումներ կատարող և արդարադատութեան աչքից խուսափող պաշտօնեաների արարքը մերկացնել:²⁾

3. Վաշխառուների դէմ կռուելու և ընդհանրապէս գիւղացուն մշտապէս կարօտութիւնից ազատելու համար պէտք է դիմել մի ապահով միջոցի.

Այն է՝ սովորեցնել նրան ինքնօգնութեան, որը կայանում է իւր աշխատութիւնը և ստացած անդինքը տնտեսելու և խելացի կերպով գործադրելու մէջ: Այս միջոցն, արդարեւ, չուտով չէ լցնում գիւղացու կարօտութիւնը, բայց լինում է հաստատ և տեղական: Մի անգամ՝ արդէն զարթեց տկար մարդու մէջ ինքն իրեն օգնելու գիտակցութիւնը, նա այնուհետեւ ապահովուած է ամեն տեսակ կարօտութեանց դէմ: Միակ, փոքրիկ դժուարութիւնը գիւղացուն այդ քանին վարժեցնելն է:³⁾

Փոխադարձ օգնութեան հաստատութիւններն են. փո-

1) Մուրաց. երկաս. եր. 89—90:

2) Նոյնը, եր. 80:

3) Նոյնը, եր. 504: Ո՛րքան միամիտ ըմբռնումն դասակարգային կարիքները վերացնելու մասին:

խառու գանձարանը, հասարակաց շտեմարանն ու հասարակաց նախիրը:

Փոխառու գանձարանը չքաւորին առանց տոկոսի, իսկ կարող գիւղացուն փոքր տոկոսով դրամ փոխ տուող հիմնարկութիւնն է: Հասարակաց շտեմարանը կազմւում է գիւղական արգիւնքների տասանորդից, չունեորները տասանորդ չեն վճարում, կարիքի ժամանակ բոլոր գիւղացիներն անխտիր՝ իրաւունք ունեն փոխ բերք վերցնելու՝ փոքր տոկոսով վերադարձնելու պայմանով: Հասարակաց նախիր կազմելու համար ունեւոր գիւղացիները նուիրաբերում են իրենց կենդանիների ձագերից մէկ կամ երկու հատ. հասարակաց նախիրը հնարաւորութիւն է տալիս լցնել չունեւոր ընտանիքների կարօտութիւնը՝ մէկին մի կամ երկու կով նուիրելով, որ նրանց կաթով իւր երեխաներին կերակրէ, միւսի դաշտը ձրիաբար հերկելով, երրորդի խոտն ու խուրձերը հանգից տուն բերելով, չորրորդի կալը կախելով և այլն:¹⁾

4. Եւ, վերջապէս, բնութեան դէմ կռուելու, գիւղացու աշխատանքն արտադրական դարձնելու կամ տնտեսութիւնը բարւոքելու համար պէտք է նրա երկրագործական, այգեբանական, անասնապահական, հաւաքուծական և այլ այսպիսի աշխատութիւնները կանոնաւորել, իսկ այդ նպատակին հասնելու համար պէտք է սովորեցնել գեղջուկին գիտութեան մշակած ձևերով տնկելու և պատուաստելու, հերկելու և ցանելու, հնձելու և կալսելու, անասուն, հաւ և մեղու դարմանելու, պարտեզ ու բանջարանոց մշակելու դիւրին եղանակները:²⁾

Մուրացանի ու իւր հերոսների կարծիքով այս ծրագրի իրագործումը գիւղացիներին կարող է ազատել կեանքի գառնութիւններից ու հասցնել մի երջանիկ դրութեան.

Դասացած արմատների մէջ կը զարթնի կենդանութիւնը.

1) Մուրաց. երկաս. եր. 504—505 եւ 90:

2) Նոյնը, եր. 90 եւ 506:

հանգչող կրակն արագութեամբ կը բոցավառուի. հայրենի աւերակը վերստին կշէնանայ:

Անգամաւոյժ գիւղը կառնէ իւր մահիճն ու կը գնայ:

IX.

Ասացինք, որ հասարակական կարիքներն անպայման հարկադրում են մտքին հնարելու միջոցներ, որոնք բաւարարութիւն տային այս կարիքներին: Բայց այս չէ նշանակում, որ երբ գոյութիւն ունի հասարակական կարիք, իսկոյն էլ գտնուում է յարմար միջոց: Երբ հասարակական զարգացումը թեւակոխում է նոր շրջան, ամենախելօք ու զարգացած գլուխներն անգամ չեն կարողանում հասկանալ իրերի ընթացքն ու յարմար իդէալներ ու ծրագրեր մշակել. ճիշտ այնպէս, ինչպէս բժիշկը սկզբնական շրջանում չի կարողանում հիւանդութիւնն որոշել և դժուարանում է գեղեր նշանակել: Իսկ երբ զարգանում են նոր կարգերն ու լիովին երեւան են գալիս սրանց էական յատկանիշներն, այն ժամանակ հեշտութեամբ գտնուում են իրագործելի իդէալներ ու ծրագրեր:

Տնտեսական նոր կարգերի առաջին շրջանը ուտոպիզմի ոսկեդարն է, իսկ վերջին շրջանները՝ բէալիզմինը:

Մուրացանի երկերում գտնուող՝ գիւղը փրկելու յիշեալ ծրագիրը գիւղացիական ուտոպիզմի մի տեսակն է: Այս հեղինակի օրերում — և դեռ մինչև այժմ էլ — կովկասում, մանաւանդ հայաբնակ վայրերում, նոր տնտեսական կարգերը դեռ ևս շատ հեռու էին զարգացման զագաթնակէտից: Այն երկրում, որտեղ առաջ լսուում էին միայն երկրագործի հորովելներն ու առևտրականի սուտ երգումները, հաղիւ էր սկսել հնչել մեքենաների աղմուկը. զուարթ երկնակամարը նոր-նոր էին պատում գործարանի ծխի սև քուլաները և շատ ժամանակ չէր, որ ամայի ձորերի ու հօրանց գնացող արտերի միջով թռչում էին հեացող գնացքները:

Հայ հասարակութեան մտքի զարգացումն ուսումնասիրողի համար գիւղական գործունէութեան վերոյիշեալ ծրագիրը հետաքրքրական է երկու կողմից:

Նախ՝ այս ծրագիրը կազմողները, Մուրացանն ու իւր հերոսները, մի շարք խնդիրներ լուծելու ժամանակ երբեք քննադատական հայեացք չեն ձգում պետական կազմի վրայ: Օրինակ, ծրագրի առաջին կէտը, ժողովրդի լուսաւորութեան գործը, պետութեան պարտականութիւն չի համարում. այս մասին պարտաւոր են հոգալու մասնաւոր անհատներ: Գիւղացու իրաւաբանական պաշտպանութեան խնդրում էլ հեղինակի ու հերոսների նպատակն է գոյութիւն ունեցող օրէնքներից շեղումները սանձահարել. նրանց մտքով անգամ չէ անցնում, թէ արդեօք գոյութիւն ունեցող օրէնքը չի պաշտպանում գիւղացուն վնասող դատակարգերի շահերը և ուրեմն գիւղացու շահերի տեսակէտից սրբագրւելու կարիք չունի:

Ծրագիրն ուշադրաւ է նաև նրանով, որ ցոյց է տալիս, թէ կազմողներն ամենեւին չէին ըմբռնում ժամանակակից հասարակութեան զարգացման տենդենցները և նպատակ դնելով փրկել գիւղը քայքայումից՝ առաջարկում էին այնպիսի միջոցներ, որոնք երբեք այս նպատակին հասնել չէին կարող:

Ծրագրի առաջին կէտն իրագործելով, այսինքն լուսաւորութիւն տարածելով հնարաւոր չէ գիւղացիութեան անկման արգելք լինել: Լուսաւորութիւնն առանց արտագրական միջոցների՝ սովամահ լինելու վտանգից փրկել չի կարող: Առևտրականների ու կապիտալիստների դասակարգն անպայման աւելի լուսաւորուած է, քան գիւղացիութիւնը, բայց այս հանգամանքն ամենեւին չի խանգարում բուրժուազիայի շարքերի նստանալուն: Տնտեսական մրցումն անդադար ձգում է շատերին շահագործողների խմբից շահագործողների մէջ. բուրժուազիան օրէցօր զօրեղանում է նիւթապէս, իսկ թուլանում՝ քանակապէս:

Նոյնը պէտք է ասել նաև գիւղացու իրաւաբանական պաշտպանութեանը վերաբերող կէտի մասին: Օրէնքով

յափշտակութիւնից կարելի է պաշտպանել այն, ինչ որ մարդ ունի ժամանակակից օրէնքը, որ ապահովում է գոյքը, անշուշտ նպաստաւոր է տնտեսական գործունէութեան համար, բայց և անգոր է կռուելու տնտեսութեան մէջ թագաւորող օրէնքների դէմ: Անգլիայի նման օրինապահ երկրում գիւղացիութիւնն այնքան է նուազել, որ կազմում է ազգաբնակչութեան չնչին տոկոսը: Ոչ միայն Անգլիայում, այլ և Արեւմուտքի ուրիշ երկրներում ամենից աւելի աչքի ընկնող երեւոյթը գիւղացիութեան քանակի նուազումն է: Ժամանակակից հասարակութեան մէջ գիւղացիութիւնը հալւում է կամաց կամաց, ինչպէս սառւոյցը գաղջ ջրի մէջ:

Գիւղացիների կարօտութիւնները լցնելու համար անհրաժեշտ են համարւում փոխատու գանձարանը, հասարակաց շտեմարանն ու հասարակաց նախիրը:

Փոխատու գանձարանը, ճիշտ է, գիւղացուն ազատում է վաշխառուի ճանկերից, բայց ամենեւին չի կարող գիւղացիութեան դրութիւնը դէպի լաւը տանել, որովհետեւ, ինչպէս ասել ենք, գիւղացիութեան անկման պատճառը փողային տնտեսութիւնն է, որ գիւղացուն շուկայի ստրուկ է դարձնում: Փոխատու գանձարանը կարիքները չբացնել չի կարող, մինչդեռ փողային տնտեսութիւնը ժամ առ ժամ բազմանում է: Ինչպէս որ քաղաքային բանկերը չեն կարողանում քաղաքի ազգաբնակչութեան մեծամասնութիւնն ազատել հանապազօրեայ հացից զրկուելու վտանգից, այնպէս էլ փոխատու գանձարանները գիւղացուն չեն կարող ազատել չքաւորութեան ճանկերից, եթէ նոյն իսկ առանց տոկոսի դրամ փոխ տան:

Հասարակաց շտեմարանն ու հասարակաց նախիր կազմելու համար գիւղի ունեւորները պէտք է տասանորդ տան կամ կենդանիներ նուիրեն: Մի րոպէ ենթադրենք, թէ գիւղի հարուստներն այնքան բարի կլինեն, որ կհամաձայնեն իրենց ստացուածքից տասանորդ հանել չքաւորների համար, ենթադրենք, որ տասանորդը բաւարարութիւն տուեց տնանկների կարիքներին, քանի որ անք քիչ

են: Բայց միթէ այս թշուառները միշտ սակաթիւ կը մնան, չէ որ չեն վերացուած այն պատճառները, որոնք այսօր քչերին են հասցրել, իսկ վաղը կամ միւս օրն էլ շատ շատերին կը հասցնեն աղքատ Ղազարոսի վիճակին: Չէ որ այն ժամանակ գիւղը բաժանուած կլինի երկու բանակի. քչեր, որոնք վայելելու են գիւղական հարստութեան⁹ 1/10-ը և շատ շատեր, որոնց բաժինը լինելու է 1/10-ը: Չէ որ այս 1/10-ը այլ ևս չի կարող բաւարարութիւն տալ ծով կարիքներին, և ուրեմն բարեգործութիւնն անկարող կըլինի գիւղը փրկելու անկումից:

Սակայն թողնենք այս ենթադրութիւնները, որովհետեւ հէնց սրանց հիմքը—գիւղի հարուստների բարեգործութիւնը լոկ երեւակայութեան արդիւնք է, հասարակաց շտեմարանի ու հասարակաց նախրի կազմակերպման մասին արտայայտուած մտքերը ցոյց են տալիս, թէ Մուրացանն ու իւր հերոսները որքան անտեղեակ են փողային տնտեսութեան ժամանակուայ հասարակութեան հոգեբանութեան հիմնական գծին: «Մարդը մարդուն գայլ» ասացուածքը ամենից աւելի յարմար է գալիս այս շրջանի մարդու կանց: «Բարեկամութիւնը փախաւ, սէրը սառաւ»,—գրում է Աղայեանը, բնորոշելով տնտեսական յեղաշրջման հետեանք բարոյական յեղաշրջումը: Մտածել, թէ բոլոր գիւղերի հարուստներին կարելի է համոզել, որ նրանք տասանորդ տան հասարակաց շտեմարանին ու նուէրներ՝ հասարակաց նախրին, և ապա այս երկուսից էլ բաժին հանեն գիւղի աղքատներին, որոնք ոչինչ չեն տուել այս հաստատութիւններին,—նոյն է թէ կարծել, որ քաղաքային բուրժուազիան կամովին իւր ստացուածքից բաժին կըհանէ 1/10-ը, որ զոհու իւր զոհերի: Մինչդեռ պատմութիւնը վկայում է, որ տիրող դասակարգերն երբեք 1/10-ը կամեով զիջել չըգիտեն: Նրանք միշտ զիջել են հաւաքուած 1/10-ը, արիւնշալի աչքերի ու ամբարձած բռունցքի առաջ:

Մինչդեռ այժմ էլ շատերը համոզուած են, որ գիտութեան տուեալների կիրարկումը գիւղական տնտեսութեան մէջ՝ մի հիմնական միջոց է գիւղացի դասակարգի

«հալըւելուն» դէմ: Առաջին հայեացքից այս կարծիքը ճիշտ է թւում: «Յիրաւի, — մտածում է մարդ, — եթէ, օրինակ, գիւղացու արտը, որ այժմ շատ անգամ հաղիւ է մէկին երեք արդիւնք տալիս, տայ մէկին եօթ, մէկին տասն և աւելի, այլ ևս ինչ է հարկաւոր գիւղացուն: Նոյնը և գիւղական տնտեսութեան ուրիշ ճիւղերում: Աշխատանքի արտադրականութիւնը զարգացնելը գիւղացու բարօրութեան հաստատ գրաւականն է»:

Նոյն այս կարծիքն է արտայայտուած նաև մեր քննութեան առարկայ հանդիսացող ծրագրի չորրորդ կէտում: Սակայն միայն մի օրինակը բաւական է համոզելու, որ գիւղական տնտեսութիւնը գիտութեան տուեալների համաձայն զարգացնել՝ դեռ ևս չի նշանակում գիւղական ամբողջ մասսան տնտեսական տաքնապից փրկել:

Ժամանակակից արդիւնաբերութիւնը գիտութեան իւրաքանչիւր նոր խօսքից աշխատում է օգտուել: Տեխնիկայի, ֆիզիկայի, բիմիայի և այլն ամեն մի նոր գիւտ անմիջապէս տեղ է գրաւում դործարանում: Բայց մի թէ կարելի է ասել, որ գիտութիւնն արդիւնաբերութիւնը զարգացնելով ապահովում է նաև դործարանատէր դասակարգի բոլոր անդամներին տնտեսական մրցման հետևանքներից: Ի հարկէ՞ ոչ: Դիտութիւնը մեծացնում է մարդու տիրապետութիւնը բնութեան վրայ, բազմապատկում է աշխատանքի արտադրական ոյժը, շատացնում է ժողովրդական հարստութիւնը, բայց այս հարստութիւնը բաշխելու վերայ չի ազդում: Ժողովրդական հարստութեան բաշխումը կախումն ունի միայն հասարակական յարաբերութիւններից: Ինչպէս որ մեքենաների զարգացումն արգելք չի լինում կրիզիսների ու յաւելեալ արժէքի գոյութեանը, այնպէս էլ գիւղական տնտեսութեան զարգացումը չի կարող վերացնել աղքատութիւնը գիւղից: Դիւղական տնտեսութեան՝ գիտութեան տուեալների համաձայն զարգացումը, ընդհակառակը, սրում է տնտեսական կռիւն և տնտեսութիւնը սակաւաթիւ մարդկանց ձեռքը կենդրոնացնելով՝ բազմաթիւ գիւղացիների վարձով աշխատող է դարձնում:

Դիտութիւնը ժամանակակից հասարակութեան մէջ միշտ երկուորեակ է ծնում. հարստութիւն ու աղքատութիւն:

Պրոմէթէոսի կրակն է պատճառը հարստի բազմաշահ պալատի և աղքատի մթին նկուղի, մեծատան շուայտ խրախճանի և տնանկի աղեկոտուր քաղցի, ունեորի հնչուն ծիծաղի և չքաւորի լուռ արտասուքի...

X.

Դիւղացիական ուտոպիզմի ներկայացուցիչների գործը լոկ ծրագիր դժելով չի վերջանում: Ծրագիրը հօ ինքն իրեն իրազանանալ չի կարող: Ուրեմն ո՞վ պէտք է այս «բանը մարմնացնէ». ո՞վ պէտք է գիւղն ազատէ տգիտութեան, օրինազանցների, վաշխաւունների ու բնութեան թաթուկներից:

«Եթայի գեղցու ցաւն էն ա, — գանգատում է Չիբուխլուի տանուտէրը, — որ մէջը մարդ չկայ, մէջքին դայաղ տուող չկայ. ինչ որ աթաղան, բաբաղան տեսե, սովրե, ինենց էլ անում ա, ինենց էլ ապրում ա: Փարճինի ծառ (վայրի տանձի) տեսած կաս, էն որ մէշէն ա հըլնում. էն էն որ թորգեն, խարիր տարի կապրի, հմէն վախտ էլ պտիկ-պտիկ չոր ու ցամաք քարճին կտայ. համա թէ մէ բարի ձեռ նրա ճղերը կտրի ու վրէն պատուաստի մալաչի դալար շուեր (չիւղ), կտէնաս մէ էրկու տարուց յետոյ էդ քարճինի ծառը մալաճի տանձեր կբերա, խամով, խոտով ու կերածդ վախտն էլ բերնիդ ջուրը կերթայ: Մեր գեղցին էլ որ կայ, մէշի ծառ ա, քոթուկը՝ խաստ, քոքերը՝ դայիմ, համա բարը քարճին ա. մէ ուստա ձեռ ա պէտք, որ ծղերը կտրի, վրէն պատուաստ անի, կուգես մեղրեկինի, կուգես գիւլ — աբի, էն վախտն էլ ընդու բարն էլ էն կըլնի, ինչ որ պատուաստելես, խամով, խոտով, սիւրունութենով... Որ օրուանից Աստուած մէ ծառ ա տնկե, անունը խայի շինական դրէ, էն օրուանից դէսը էդ ծառի ծղերին մէ ծղատող չի (յոտոց) դիպե, խազար տարի ումըր

ա քաշե, խաղար տարուայ բարը հըմմէն վախտ քարճին ա հէլե ու քարճին: ¹⁾

Նոյն կարծիքին են նաև Պետրոս Կամսարեանն ու ընկերները:

«Հայ գիւղացին տգէտ, յետամնաց, հետեւապէս եւ թշուառ է մնում այն պատճառով, որ բոլոր իւր կեանքում զուրկ է մնում առաջնորդից, սրտացաւ խորհրդատուից, քարի օրինակից: Լինէին դրանք, և նա կազատուէր դարերի ընթացքում իւր վրայ բռնացող ճակատագրական թշուառութիւնից»: ²⁾

Արդ ո՞վ կարող է լինել հայ գիւղի «մէջի մարդը» գիւղացու մէջքին դայաղ տուողը, քարճինի ծառը պատուատողը, առաջնորդը, սրտացաւ խորհրդատունն ու բարի օրինակը:

Սեանի երիտասարդ վանականներից մէկը պատասխանում է սոյն հարցին.

—Այս դերը կատարելու պարտականութիւն ունեն մտաւոր ու նիւթական հարստութեամբ օժտուած երիտասարդները, որոնք ամեն տարի տասնեակներով աւարտում և վերադառնում են հայրենիք. իրենց մտաւոր պատրաստութեան շնորհիւ նրանք լաւ ըմբռնում են ժամանակի պահանջը և ճանաչում ժողովրդի ցաւերն ու կարիքը, միևնոյն ժամանակ իրենց բազմաթիւ լինելու շնորհիւ նրանք պատկառելի ոյժ են կազմում եւ այդ ուժով կարող են մեծ անիւններ դարձնել: ³⁾

Այսպէս է մտածում նաև Թարսաչայի պոստային վերակացուն, երբ դիմում է Կամսարեանին.

«Պէտք է տեսնէք, եղբայր, թէ որքան բան կայ այդ պիտի մի խեղճ գիւղում անելու: Հաւատացած եմ, որ շատ պիտի յուզուիք ու վշտանաք՝ տեսնելով այդտեղի ձեր ազգակիցների դրութիւնը և միևնոյն ժամանակ յի-

1) Մուրաց. երկաս. եր. 172—174:

2) Նոյնը, եր. 174—175:

3) Նոյնը, եր. 235:

շելով անտարքերութիւնն այն մարդկանց, որոնք կարող էին օգնել գիւղացուն իւր վիճակը բարւոքելու, քայց չարին, որովհետեւ չկամեցան»: ¹⁾

Սրա տրտունջն էլ ուղղուած է

«Այն երիտասարդների դէմ, որոնք քարճը կըթուծին ստանալով, կարողութիւն են ձեռք բերում ժողովրդին ամեն կերպ ծառայելու, սակայն այդ ծառայութիւնից փախչում են վատաբար»: ²⁾

Սեանի երիտասարդ վանականի ու Թարսաչայի պոստի կայարանի վերակացուի նման են մտածում նաև Մուրացյանն ու իւր հերոսները.

—Ինտելիգենցիան է հայ գիւղի փրկիչը, — ազազակում են սրանք միաձայն:

Սակայն այս կարծիքը մեզ աւելի է համոզում, որ թէ Մուրացյանն և թէ սրա երկերի հերոսները զտարիւն ուտուպիստներ են, որոնք իրենց բոլոր յոյսը դրել են «հերոսների» վրայ, որոնք զուրկ են մասսաների ինքնագործունէութեան դադարից և չգիտեն, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունի պատմութեան մէջ հասարակական խմբերի պայքարը:

Նոր չէ ուտուպիստական այս համոզմունքը և ոչ էլ հայ մտքին միայն սեփական. Պատմութեան ընթացքում ամեն անգամ, երբ փողային ու կապիտալիստական տնտեսութիւնները սկիզբ են դրել գիւղի քայքայման, միշտ հանդէս են եկել ուտուպիստներ, որոնց կարծիքով ինտելիգենցիան կարող է կուռել տնտեսական զարգացման օրէնքների դէմ ու փոփոխել առաջացած դրութիւնն իւր իդէալների համաձայն:

—Ինտելիգենցիան կարող է ազատել Գերմանիան կապիտալիզմից, — ազազակում էին 40-ական թուականների գերմանական ուտուպիստները:

1) Մուրաց. երկաս. եր. 143:

2) Նոյնը, եր. 145:

Բայց և այնպէս Հռենոսի հովտում յազմող հանգիստացաւ կապիտալիզմը:

— Ինտելիգենցիան կը կազմակերպէ ժողովրդական տնտեսութիւնը, — գոչում էին 70 և 80-ական թուականներին ռուս ուտոպիստները, նարոգենիկական աշխարհահայեացքի ներկայացուցիչները:

Այնուամենայնիւ Ռուսիայում ընկաւ տնայնագործութիւնը, քայքայուեց համայնքը և անշարժ ու քնքոտ Աբրամովայում բարձրաձայն սուլեցին գործարանները:

— Ինտելիգենցիան է հայ գիւղի վիշապաքաղը, — պնդում էին և գեռ ևս պնդում են հայ ուտոպիստները:

Սակայն հէնց Մուրացանի երկերը վկայում են, որ հայրենի «վիշապաքաղի» վերայ մեծ յոյսեր դնել չի կարելի:

XI.

Ինտելիգենցիայի ու գիւղի յարաբերութեանն են նուիրուած Մուրացանի «Խորհրդաւոր միանձնուհի» վէպը, «Նոյի ագռաւ» զրոյցն ու «Առաքեալը» վիպակը: Այս երկերին վերայ ժամանակագրական կարգով թեթեւ հայեացք ձգելը կպարզէ, թէ արդեօք հայ ինտելիգենցիան կատարեց այն դերը, որ նրան էին վերագրում, արդեօք հայ գիւղը ինտելիգենցիայի մոգական գաւազանի հպումից կենդանացաւ, թէ դարձեալ մնում է նոյն «աւերանոցը», որտեղ «հետզհետէ հանգչում է կենդանութիւնը», ինչպէս վկայում է հեղինակի հերոսներից մէկը:¹⁾

1) «Խորհրդաւոր միանձնուհին» առաջին անգամ լոյս է տեսել 1889 թուականին, «Նոյի ագռաւը»՝ 1899-ին, իսկ «Առաքեալը»՝ 1902-ին:

Թէեւ այս աշխատութեան նպատակը չէ դնահատել Մուրացանին, իբրեւ գեղարուեստագէտի, այնուամենայնիւ պարտք ենք համարում այս մասին մի երկու խօսք ասել ու շեշտել, որ այս տաղանդաւոր հեղինակը մինչեւ այժմ ոչ միայն ընթերցող ընդհանրութեան, այլ եւ քննադատող փորձամասնութեան կողմից արժանի գնահատութեան չէ հանդիպել: Ռուս

«Խորհրդաւոր միանձնուհի» հերոսուհին, Աննան, որ քաղաքային հարուստ, կրթուած ու գեղեցիկ մի օրիորդ է, ուսուցիչ Գարեգնի պատուէրին հնազանդ՝ ուխտում է լինել միանձնուհի ու նուիրուել «հասարակաց բարւոյն»: Հագնում է կոյսի զգեստ, արհամարհում է կեանքի վայելչութիւնները, մոռանում է քաղաքը, թողնում է հովիտն ու հեռու վանելով կանացի տկարութիւնը բարձրանում է Սիւնեաց լեռներն և այնտեղ գտնելով մի յետ ընկած գիւղ արիաքար սկսում է գործել: Օգնում է կարօտ ընտանիքներին խօսքով ու գործով, իւր միջոցներով լրացնում է նրանց տնտեսութեան կարիքները, հիմնում է ուսումնարան, բարեգարգում է եկեղեցին, հաստատում է փոխատու գանձարան, հասարակաց շտեմարան, կազմում է հասարակաց նախիր, սովորեցնում է գիւղացուն աշխատանքն արտադրական դարձնելու միջոցներ և այն գիւղը հասցնում է մի նախանձելի դրութեան: Քսան տարի աշխատում է քոյր Աննան Ն. գիւղում ու այնտեղ էլ մեռնում:

սահայ զրականութեան մէջ Մուրացանը վիպական լեզուի առաջին վարպետն է, ինչպէս Յովհ. Յովհաննիսեանը՝ բանաստեղծական լեզուինը: Վէպի հմուտ կառուցումով, շրջապատի ու հոգեկան կեանքի նուրբ դիտողութեամբ, այլ եւ ընդհանրապէս իբրեւ գեղարուեստագէտ վիպասան սա բարձր է բոլոր նախորդ վիպասաններից, իսկ ժամանակակիցներից առաջնութեան դասին կարող է զիջել միմիայն Շիրվազադէին: Մուրացանի մեծ արժանիքներից մէկն էլ նրա քնոյշ իւմորն է: Օրինակ «Նոյի ագռաւի» մէջ Տէր Մակուչի, իսկ «Առաքեալի» մէջ Տէր Վանու. տիրացու Մոսու, այլ եւ կառապան Ովանէսի հետ կապուած տեսարանները հայ իւմորի փայլուն էջերից են: Մինչդեռ Պարոնեանը ծիծաղեցնում է առանց արտասուել տալու. մինչդեռ Ռ. Պապկանեանը ծիծաղի հետ արտասուք խառնելով հանդերձ իւմորը շատ անգամ փոխում է սատիրայի եւ վշտի ամպերի միջից ատելութեան շանթեր է ցուցնում, Մուրացանը մի հազուադիւս ձիրքով նախ անոյշ ծիծաղում է, ապա յուշիկ հեկեկում առանց ատելութեան փոքրիկ նշողի: Նա մի գծոտ մարդ է, որ զորովով շոյում է իւր զաւակներին, որոնք նրա կրծքից թէ բաղցը բրբիջ եւ թէ դառն արտասուք են բղխեցրել:

Մուրացանի իւմորը նոր էր ծլում եւ անշուշտ շրեղ փթթելու էր. սակայն բնութեան իւմորը յաղթող հանդիսացաւ:...

է: Նրա քսանամեայ գործունէութեան հետեանքն այն է լինում, որ Ն. գիւղից արտաքսւում են բոլորովին խռովութիւնը, անուսումնութիւնն ու աղքատութիւնը:

Մինչ Շիրերի Կաստանդրան ողբում է իւր վիճակը, որովհետեւ տեսնում է ապագան և զուրկ է ներկայից, ծառայում է հանրութեանը և չունի անձնական երջանկութիւն, Մուրացանի քոյր Աննան կորցնում է ներկան ապագան գտնելու համար և ոգևորւում անձնազոհութեան գաղափարով: Նրա վերջին խօսքերը լինում են. «Մեռաւ ցոցեանն, զի բազում արդիւնս արագէ»...

Քոյր Աննան ինտելիգենտ գործչի մի կատարելատիպ է Մուրացանի համար, և սա համարեա սրբացնում է նրան վէպի վերջին տողերում:

«Ես խորին ակնածութեամբ մօտեցայ շիրիմին և երկիւղածութեամբ համբուրեցի այն: Տապանի վերայ հանգուցեալի ցանկութեամբ փորագրուած էր միայն երեք բառ. «Քոյր Աննայի հանգիստը»: Բայց ճիւղան մտքեր, ճիւղան պատմութիւններ կային այդ պարզ բառերի մէջ... Այստեղ ամփոփուած էր գողտրիկ զգացմունքների, սուրբ գաղափարների և ազնուագոյն ոգևորութեան մի ամբողջ աշխարհ... Այդ կանաչադարձ շիրիմի մէջ հանգչում էր հայրենիքի սուրբ սիրոյ նահատակը—մարմնացեալ անձնութիւնը, որ սրի դէմ չէր գնացել, վառօդի դէմ չէր խիզախել, բայց մղել էր նոյն կռիւը, ինչ որ ամեն մի հերոս... Ո՞ր ճշմարիտ հայրենասէրը չէր խոնարհիլ իւր գլուխը այդ սրբազան շիրիմի առաջ, և ո՞ր երիտասարդ սրտին սէր ու եռանդ չէր ներշնչիլ «Քոյր Աննայի հանգիստը»...»¹⁾

«Խորհրդաւոր միանձնուհու» մէջ Մուրացանը պատկերացնում է ոչ միայն այն, ինչ որ կարող էր գոյութիւն ունենալ որեւէ գիւղում, այլ և այն, ինչ որ կուզենար, որ գոյութիւն ունենար:

«Սակայն այն օրից,—պատմում է Ն. գիւղի քահանայ Տէր Յովսէփը,—որ կոյսը մեր գիւղումն է, զրեթէ ոչ

մի տան, կամ ընտանիքում խռովութիւն ու զժտութիւն չէ ծագել»:¹⁾

«Այժմ մենք ունինք այստեղ մի «հասարակաց շտեմարան»,—տեղեկացնում է Կոյս Աննան,—որին իւրաքանչիւր գիւղացի տարուայ մէջ ստացած իւր արդիւնքից տալիս է տասանորդ—ցօրեն, գարի կամ կօրեակ, նայելով թէ ինչ արժուիք ունի ինքը: Իսկ կարօտութեան ժամանակ նա անարգել օգուտ է քաղում այդ շտեմարանից փոխառաբար այն պայմանով, որ պարտքը վերագարձնէ սրոշ տոկոսի հետ: Այդ շտեմարանին տասանորդ չեն վճարում միայն չունեւորները, բայց կարիքի ժամանակ նրանք էլ համահաւասար իրաւունքներով օգտւում են նրանցից: Մենք ունենք նոյնպէս «հասարակաց նախիր», որին ամեն մի ունեւոր տարուայ մէջ նուիրում է մի կամ երկու հորթ, նայելով թէ Աստուած ո՞ք քան է պարգեւել իրեն: Այդ նախիրը դնալով հարստանում է եւ մենք նորից լցնում ենք դարձեալ չունեւոր ընտանիքների կարօտութիւնը՝ մէկին մի կամ երկու կով նուիրելով, որ նրանց կաթով իւր երեխաները կերակէ, միւսի դաշտը ձրիաբար հերկելով, երրորդի խոտն ու խուրձերը հանգից տուն բերելով, չորրորդի կալը կախելով և այլն»:²⁾

«Ամենից առաջ,—պատմում է գիւղի բարերար միանձնուհին,—ես ոչադրութիւն դարձրի գիւղի աղքատ և առողջեական ընտանիքների վերայ և նրանցից իւրաքանչիւրի կարօտութեան չափն իմանալուց յետոյ յորդորեցի հարուստ գիւղացիներին օգնել նրանց, ինչ բանով որ կարող էին: Եւ որովհետեւ գիւղացու համար օրինական ամեն խօսքից զօրաւոր է, ուստի ամենից առաջ ես սկսայ օգնել կարօտներին: Իմ սեփական միջոցներով գնեցի եղներ, կովեր, այծեր և գիւղացուն պիտանի ուրիշ պարագաներ և բաժանելով այդ ամենից աւելի կարիք ունեցողներին՝ նոյնը անել յորդորեցի եւ հարուստ գիւղացիներին, այն է՝

1) Մուրաց. երկաս. եր. 372:

2) Նոյնը, եր. 304—305:

1) Մուրաց. երկաս. եր. 338—339:

իրենց աւելորդից մի մի քան յատկացնել չունենոր դրացուն։ Մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ տեսայ, թէ իմ օրինակն ու յորդորը ապարդիւն չանցան։ Գիւղացիների մէջ զարթեց գեղեցիկ նախանձաւորութիւն՝ միմեանց օգնելու։ Եւ այդ նորութիւնը ոչ միայն հետզհետէ գիւղի միջից հալածեց աղքատութիւնը, այլ եւ գիւղացիների մէջ հաստատեց սէր եւ բարեկամութիւն սովորեցնելով ընկերին՝ սիրել ընկերոջն եւ օգնել նրան»։¹⁾

Այս երկար հատուածները, ինչպէս և շատ ուրիշները, ցոյց են տալիս, որ տենդենցիան հեղինակին «ստիպել է անիրական գծեր մտցնել երկի մէջ, ցանկալին բաւական տեղ է գրաւել, և «Խորհրդաւոր միանձնահին» դարձել է գիւղական ուտոպիա։

Մուրացանի այս վէպը վկայում է, թէ հեղինակն ինչ մեծ գեր ու ոյժ է վերագրում ինտելիգենցիային. եթէ կնոջ կամքը կարող է այսքան գործեր կատարել, ապա ինչեւ կարող են անել տղամարդիկ։ Բայց արդեօք ինտելիգենցիան նուիրւում է իւր կոչմանը, արդեօք քոյր Աննան մի բացառութիւն չէ, արդեօք նա մի միայնակ ծաղիկ չէ, որի երեւալը դեռ ևս իրաւունք չի տալիս ասելու, թէ գարունն եկել է։ Վէպի ուշադիր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ, յիշաւի, ինտելիգենցիայի փառաբանութեան հետ լուրում են նաև արտունջի ձայներ, մեծ յոյսի մօտ նշմարւում է՝ տակաւին փոքր կասկածը և թէպէտ ոչ ուժգին, այնուամենայնիւ հնչւում են արդէն ինտելիգենցիայի անտարբերութեան հանդէպ հօգի վշտի առաջին նուագները։

«Գնացէք հեռու հեռու, — պատուիրում է ուսուցիչ Գարեգինը, — դէպի կորած հայ գիւղերը, դէպի այն ժողովուրդը, որին մոռացել են մեր զործիչները, որի մէջ օր ըստ օրէ նուազում, հանգչում է կենդանութեան ոյժը»։²⁾

«Եթէ այս հոգւով վառւած մի քանի տասնեակ գոր-

1) Մուրաց. երկաս. եր. 498—499։

2) Նոյնը, եր. 486։

ծիչներ ունենային, — բացականչում է «Խորհրդաւոր միանձնահու գործող անձերից մէկը՝ ակնարկելով կոյս Աննային, — լեռներ կշարժէին, գետերի ընթացքը կը կասեցնէին»... քայց ո՛րք են այդ զործիչները»։¹⁾

«Քոյր Աննայի մեռնելով, — նկատում է նոյն անձնաւորութիւնը, — մենք կորցնում էինք մինն այն գերազանց ոյժերից, որոնք ծնունդ էին առել վաթսուհական թուականներին և որոնց, սակայն, արժանաւոր հետեւողներ չգտնուեցան մինչեւ այսօր»։²⁾

Վէպի ամենավերջին բառերն էլ վկայում են, որ ինտելիգենցիան, գիւղի փրկիչը դեռ ևս չի մտածում գիւղի մասին, որն «օրեր է համրում ու նրան սպասում»։

«Իմ աղօթքը մի ջերմ ցանկութիւն էր, տեսնել մեր մէջ, զոնէ այստե՛տեւ, քոյր Աննային և նրա ուսուցչին արժանաւոր հետեւողներ»։³⁾

1) Մուրաց. երկաս. եր. 527։

2) Նոյնը, եր. 555։

3) Նոյնը, եր. 559. «Խորհրդաւոր միանձնահու» մէջ ուշադրութեան արժանի են քոյր Աննայի դատողութիւնները գիւղացիների կըրթութեան մասին. մասնաւորապէս նրա հետեւեալ կարծիքը նշանաւոր է. «Հակառակ եմ, որ գիւղացին իւր մասնաւոր ուսումն ու կրթութիւնն ստանալուց յետոյ գիւղացի լինելու փոխարէն՝ ձգտի լինել մի ուրիշ բան»։ (Նոյնը, եր. 595) գիւղացիութեան իդէոլոգը ամեն կերպ ձգնում է անխախտ պահել այս գոսակարգի ամբողջութիւնը։

Գրականութեան պատմագրի համար մեծ արժէք ունի նաեւ հետեւեալ հատուածը, որ քոյր Աննային գաղափարակից մի անձնաւորութեան մտերն է պարունակում։ «Եւ որոշել եմ հեռանալ այնպիսի գիւղ, որ բաղաժից կտրւած լինի շատ ու շատ լեռներով։ Յանկանում եմ ապրել այնպիսի մի տեղ, ուր մարդկանց հետ միասին ապրում է նաեւ ցանապետակաճութիւնը, ուր կեանքի պարզութեան հետ պահպանւում է նաեւ բարբի մարտութիւնը, սրտի անկեղծութիւնը։ Եւ յոգնել, ծանծրացել եմ սովորական կեանքից, սովորական մարդկանցից եւ մանաւանդ թէ՛ սովորական բարեկամութիւնից, որն իւր մէջ ինձ համար չունի այլ ևս ոչինչ նոր ու չերմացնող։ Այժմ արդէն պտրւում եմ ցախիկ մարդն ու նրա անխաբոյս եւ քեկուզ կիսով չափ վայրենի ընկերակցութիւնը։ Գուցէ այս էլ նեարդային հիւանդութեան քմահաճոյք է, ինչպէս բժիշկն է նկատում, չգիտեմ...» (Նոյնը,

XII.

Ունեցան արդեօք քոյր Աննան ու նրա ուսուցիչն արժանաւոր հետեւողներ «գոնէ այնուհետեւ»։ Այս հարցին պատասխանում է Մուրացանը ժամանակագրական կարգով յաջորդ գրութեան — «նոյն ագռաւի» մէջ։

Վեդունց Սարգիսը, գիւղի հարուստներից մէկը, ուզում է իւր տան յարկի վերայ մի յարկ էլ աւելացնել, բայց վանքի վանահայր Օսէփի հայրսուրբը նրան խորհուրդ է տալիս, որ փոխանակ փողն այն նպատակով ծախսելով՝ աւելի լաւ է՝ օրդուն, մանուկ վանուն, ուղարկէ ուսում առնելու։

«Հրէն զարկի Թիֆլիս, գիմեազումը կարծի, լաւ ուսում ստանայ։ Ընդհան ետն էլ զրկի Մոսկով եւ չէ Պետերպոլի, որ ունիվերս մտնի, ընտեղի մեծ ուսումն էլ առնի, փրկիսով դառնայ։ Էնչաղը կգայ, էս գեղի միջումը մին հատ մարթ կըլի։ Համ իրա ձեռով տանդ գլուխը կշինի, համ էլ միջումը յուսումնարան կըանայ։ Խեղճ են էս գեղըցիքը, խաւար մնացել են, խաւար էլ պտի մեռնեն. սրանց բեխէքը կը հաւաքի, ուսում կտայ ու մի քանի տարէն եղը սաղ գեղը կլուսաւորի»։¹⁾

Հայր սուրբի ասածները նստում են Սարգսի գլխումը, և սա թողնում է տան շինութիւնն ու վանուն տանում է Թիֆլիս։ Մի տարի պատրաստուելուց յետոյ վանին մտնում է

եր. 541)։ Գրականութեան պատմութեանը ծանօթ մարդը հեշտութեամբ կըմբռնէ, որ այս «հիւանդութեան» պատճառները ֆիզիոլոգիական չեն, այլ սոցիոլոգիական։ Ամեն անգամ, երբ զարգանում է քաղաքը, երբ դորեզանում են քաղաքացի դասակարգերը, զոնուականութեան ու գիւղացիութեան իդէոլոգներն իսկոյն «նեարդային հիւանդութիւն» են ստանում եւ փնտրում նախկին մարդն ու նրա վայրենի ընկերակցութիւնը։ Այս «հիւանդութեամբ» էին բռնուած, օրինակ, ֆրանսիացի շատ հեղինակներ XIX դարի առաջին քառորդում թէկոյի ժամանակ։

1) Մուրաց. երկաս. եր. 59—60։

գիմնազիան իբրեւ գիշերօթիկ աշակերտ, որտեղ և մնում է եօթը տարի մինչեւ աւարտելը։ Այս եօթը տարուայ ընթացքում Սարգսի ունեցած փողը ձեռքից դուրս է գալիս, ու նա մնում է դատարկ։ Սակայն վանին ուշադրութիւն չի դարձնում հօր նիւթական հանգամանքների վերայ ու պահանջում է, որ իրեն ուղարկեն համալսարան։ Որդեւէր հայրը չկամենալով զաւակին ուսումից զրկել՝ վճարում է ծախել, իւր ունեցած չունեցածն ու վանու համար «ունիվերս»-ի փող ճարել։ Վաճառում է հայենական թիթի այգին, յետոյ և ջրաղացն ու ստացածն ուղարկում է օրդուն։ Սակայն շուտով այս փողերն էլ են վերջանում։

«Էն ա ջլիկ դայամիշ ի էլել, գնացի հայր սուրբի մօտ, ասեցի. Ա՛ վարդապետ, ախր էլ դմանալու ուժ չունեմ, ինչ անեմ։ Ասեց. ա՛ Սաք, շատին դմացել ես, քչին էլ դմաց. ձիանդ ծախի. եղներդ ծախի, փող հասցրու։ Դու սկի վախիլ մի. տղադ որ եդ դառնայ, իրա սովորած թահ-րովը լաւ բաղ էլ ա անկելու, նոր դայդի ջաղաց էլ ա շինելու, եղներդ ու ձիանդ էլ ա շատացնելու։ Ուսում առած տղան որ կայ, նոյի աղաւնին ա, որ ձթենու շիւր բերանումն եդ ա գալիս ու բախտաւորութենի խաբարը բերում ծնողին»։¹⁾

Վարդապետի խօսքերը սիրտ են տալիս Սարգսին և սա սկսում է ձիերն ու եղները մէկ մէկ ծախել ու փողն ուղարկել վանուն։ Եւ մինչ անձնուէր հայրը անհամբեր սպասում էր, թէ ահա կվերադառնայ օրդին, համ պարտքը կտայ, համ իւր ծռած բաները կը դրստի, յանկարծ նամակ է ստանում վանուց, որով սա հաղորդում էր, թէ եկել է Թիֆլիս, ամուսնանում է մի վրացի աղջկայ հետ և մտնում է «զուլուլի», մի խօսքով՝ մնալու է քաղաքում ու գիւղ վերադառնալ չի կարող։ Հիասթափութիւնն ու վիշտը կրծում են ծերունի հօր սիրտը։

Գիտում ի, վանին Թիֆլիսում պոսկուելուց ետը էլ մեզ մօտ չի գալու, վաթանն էլ ա մտքիցը գցելու, հօր

1) Մուրաց. երկաս. եր. 68։

տունն էր, էս ցաւին, գիտա՞ք, գիմանալ չէր ըլիս: 1)

Վանին, հօր մօր միակ որդին այլ ևս գիւղ չի վերա-
դառնալու, այն Վանին, որի ժամանակաւոր բացակայու-
թիւնը ծնողներին անպատմելի վիշտ էր պատճառում տա-
րիներ առաջ, երբ նա դեռ Թիֆլիսի գիմնազիայումն էր:

«Օր ու գիշեր, — պատմում է այն ժամանակուայ մա-
սին հայրը, — հէնց նրա վրէժն ի մտածում: Եարա՞ք, ասում
ի, բեխաս հօ. չմտեց, ես չհիւանդացա՞ւ: Եարա՞ք, ետգի
տանը բեխի սիրտը հօ. չկոտորեցա՞ւ... Ամա ինչ որ նրա
մէրն էր անում, բերանով ասուել չի ըլի: Խեղճը ոչ գի-
շերը քուն ունէր, ոչ ցերեկը զարտուր: Տափը, ասես, տեղ
չէր տալիս, որ նստի. էն ա ամեն մի ներս ու դուրս ա-
նելով էնենց էր ախ քաշում, որ ասես ջիգարը պոկ ա գա-
լու: Բեխի սիրտ՝ շունը որ տենում էր թէ հոտոտելով
դէս ու դէն ա գնում, ասում էր. Ա՛ Ղաթար, Վանուն ես
ման գալի, բստի չի, քե մատաղ, էնա օխտը սարի քմա-
կին. — ասում էր ու լաց ըլում: Նախիրը որ հանդումը
եղանում էր, հօրթերը բռանչում ին, ասում էր. Ձան,
եարաք իմ բեխէն էլ ձեզ նման անմէր մնացած բռան-
չում ա, հու ձէնը լսող չկայ... — Եփ որ մտնում էր էս
բախչէն հու տեսնում ծառերը տանձ ու խնձոր լիքը,
ասում էր. Ձեր աչքը քոռանայ, էդ ուր էք ըղենց կա-
նանչ կարմիր լցուել, ճոնքոտել (ծանրաբեռնուել), ախար
որ Վանին ըստի չի, խի՞ չէք չորանում, վէր թափում...» 2)

Ահա այս սիրասուն զաւակի վարմունքն է, որ բոլո-
րովին յուսահատեցնում է անբախտ հօրը:

«Նրա (Վանու Թ. Ա.) գիրը վեր կալայ, գնացի վանքը:
էն վախտը Օսէփ հայր սուրբը մեռել էր: Գնացի նրա գե-
րեզմանի առաջին չորեցի, քարը համբուրեցի ու լաց ըլե-
լով ասեցի. «Օսէփ հայր սուրբ, լուս դառնաս դու հողովդ
ու քարովդ. ախար դու ինձ ասեցիր, որ իմ Վանին Նոյի
աղաւնին ա, էս ա ձիթենու շիւր բերանում եդ ա գալու,

որ բաղդաւորութենի խաբարը բերի ինձ. բա խի՞ ըտենց
չիլա... ախր Վանին հօի Նոյի աղաւն ա դառել, ջամ-
դաքի վրէժն նստել ա ու էլ եդ չի գալի. սրա ճարն ի՞նչ
կըլի...» 1)

Վեդունց Սարգսի կարծիքով «իրա վաթանը մոռացողը,
հօր տունն աչքից ու մտքից գցողը մարդ չի, հայուն առ-
նւատի զարմանալի չէ, որ Վանու վարմունքը բոլորովին
յեղաշրջում է նրա մտածողութիւններն ուսման ու ինտե-
լիգենտի մասին. այնուհետեւ հիասթափուած ծնողն իւր
բոլոր աղդեցութիւնը գործադրում է այն բանի վերայ,
որ թոյլ չտայ գիւղացիներին՝ ուսման տալու իրենց զա-
ւակներին:

«Եփ լսում եմ, մեր գեղականին մինը ուղում ա իրա
տղին քաղաք զրկի յուսում առնելու, էն սհաթին գնում
եմ կռնիցը բռնում, բերում մեր հայաթումը կանգնաց-
նում ու ասում. — Տես, որդի, էս Վեդունց Սարգսի չէն
օջաղն ա, որ էս օր վէրանա (աւերակ) ա դառել: Ա՛յ,
տես, կտուրը ծռուել ա, պէշերը թափուել են, գերանը
կախ ա ընկել, գիւմը դարտակուել ա, ու մեզ թացան
տուողը մի է՞ծ ա մնացել... Մենք էլ, տեսնում ես, մարդ
ու կնիկ ծերացել, մնացել ենք անտէր. ոչ ձեռք կայ, որ
մեր դուռը բանայ, ոչ ձէն կայ, որ սրտներս ուրախացնի...
էս դիփ նրա մեղն ա, որ ես իմ տղին յուսումի զրկեցի...
Վախիր էդ բանիցը, որդի, որդի, բեխէդ քու կշտին պա-
հիր, տանիցդ մի հեռացնիլ, որ իմ Վանու նման Նոյի
աղաւ չդառնայ... .. Լաւն էն չի՞, որ մեր գեղը յիսուն
վար անող տղամարդ էլելի ունենայ, քան թէ հարիր Նոյի
աղաւ: Վար անողը հալա հաց կըքրի տուն. քուլիաթի
ռուզին կկշտացնի, Նոյի աղաւն ի՞նչի ա պէտք...» 2)

Վեդունց Սարգսը գիւղացիութեան ներկայացուցիչ է.
նա չի մտածում հասարակական ուրիշ խմբերի մասին: Նրա
վիշտը միայն անձնական վիշտ չէ, այլ և դասակարգային,

1) Մուրաց. երկաս. եր. 70:

2) Նոյնը, եր. 61—62:

1) Մուրաց. երկաս. եր. 74—72:

2) Նոյնը, եր. 74—73:

նրա հոգոր միայն իւր ընտանիքը չէ, այլ և խաւար դիւղն ու խեղճ շինականը:

«Բա ես իմ էլած չեւածը փչացրել, վանին յուսում եմ տուել, որ նա Թիփլիզին պէտք գայ. խի Թիփլիզումը նրա նմանները քիչ կան. ես չէ իմ սիրտը շատ էր ցաւում էդ քարքաղի (քանդուածի) համար... Ես իմ տղին ուսում եմ տուել, որ առաջ իմ օջախը շինի, իմ հանգած ճրագը վառի. իմ տունը հարս բերելով ինձ ու իմ պառաւին ուրախացնի. եղն էլ իրա ուսումով էս խաւար գեղը լուսաւորի, մեր խեղճ ու հայուան շինականին կողից, քնդառից ազատի... Թիփլիզում վանին թող հէնց երկնքից հրեշտակ վեր բերի, ինձ ինչ... հրէն, ճր երկրում որ լուսաւէտ, ես չէ փանդ ու փելով մարդ կայ հէնց դպա Թիփլիզ ա վազ տալի. դուք էս մեր խեղճ գեղի դարդը քաշեցէք, որ ոչ տէր ունի ոչ սրտացաւ...»: ¹⁾

Ինտելիգենցիայի անտարբերութեան հանդէպ հողի վշտի նուագները շատ ուժգին են հնչում վեգունց Սարգսի բերանում. վիշտն աւելի խորն է այն պատճառով, որ ոչ միայն քաղաքացի ինտելիգենտները չեն մտածում գիւղի մասին, այլ և նրանք, որոնք նոյն գիւղի գաւակներն են. նոյի ագաւանները որանք են և, ինչպէս վկայում է վանու հայրը, սակաւաթիւ չեն այս «շամբակ ուսողներն ու տապանը մոռացողները»:

«Հո՛վ ա մեղաւոր, — հարցնում է գիւղացիութեան ներկայացուցիչը, — որ գեղի քահանան Տէր-Մակունչն ա, հո՛վ ա մեղաւոր, որ եղցու առաջը անապատ ա, հո՛վ ա մեղաւոր, որ գեղը կեղտոտ ա, աները տափից կպած, հայեաթները թրքով լիքը, քուչէքը՝ ծուռ ու մուռ... ասեցէք, տենամ, հո՛վ ա մեղաւոր, խեղճ գեղականը, թէ նոյի ագաւոր: Ախար ինչ կլի հմի էս գեղարանից մի տասը, քսան տղայ գնացել են, յուսում տուել, լուսաւորուել. հմի ո՛ւր են, ընչի՞ նրանցից մինն ու մինը եղ չեկաւ, որ իրա հօր օջախը վառի, իրա վսթանը պայծառացնի...»: ²⁾

1) Մուրաց. երկաս. եր. 72—75:

2) Նոյնը, եր. 72:

Այժմ հարցնենք նուից. ունեցան արդեօք քոյր Աննան ու իւր ուսուցիչը «գոնէ այնուհետեւ» իրենց արժանաւոր հետևողներ:

Ոչ, որովհետեւ անտեսական զարգացումն ուռճացրել է քաղաքներն ու աղքատացրել գիւղերը: Եւ ինչպէս մագնիսացրած ասեղները ձգում են այն կողմը, որտեղ գրունում է բւեռը, մագնիսական զօրութեան կենդրոնը, այնպէս էլ ինտելիգենցիան խուժում է քաղաք, որտեղ կուտակուած է հարստութիւնը:

Սիրենաներն երգելով դիւթում են նաւորդներին և չկայ մէկը, որ խցէ սրանց աղանջները: Նաւորդներն իջնում են յաւերժահարսերի կզղին, իսկ նրանց ընտանիքները ալինապիշ նայում են ճանապարհին ի զուր սպասելով անձկալիների վերադարձին:

XIII

«Առաքեալով» Մուրացանն երրորդ անգամ վերադառնում է ինտելիգենցիայի ու գիւղի յարաբերութեան հարցին:

Պետրոս Կամսարեանը, Թիֆլիսեցի հարուստ կիրիլ Կարպիշի որդին, իրաւաբանական ուսումն աւարտելու ժամանակ ուսանողական ժողովում հանդիսաւոր խոստումն է անում ընկերներին թէ

«Որոշել է քննութիւններից յետոյ վերադառնալ և իրեն նուիրել իւր ազգակիցների ամենից աւելի օգնութեան կարօտ դասակարգին, այսինքն մտնել գիւղը և այնտեղ հիմնել օգնութեան մեծ գործ՝ յատկացնելով այդ նպատակին իւր հարուստ հօրից իրեն հասանելիք ժառանգութիւնը»: ¹⁾

Պետրոսի գիտաւորութիւնն անկեղծ է. նա թէեւ չէ տեսել գիւղն ու գիւղացուն, բայց միշտ լսել է նրանց թշուառ դրութեան մասին և կարեկցելով գծագրել է գոր-

1) Մուրաց. երկաս. 86—87: Ընդգծումը Մուրացանինն է:

ծունէութեան ծրագիր, որն իրագործելու հաստատ մտադրութիւն ունի այժմ: Լուսաւորել գիւղացուն, իրաւաբանական պաշտպանութիւն ցոյց տալ սրան, ազատել վաշխառուներից ու բարեօքել տնտեսութիւնը գիւղում,— ահա Կամսարեանի կեանքի իգէալը:

Քննութիւններից յետոյ Կամսարեանը վերադառնում է Թիֆլիս ծնողների մօտ: Եւ մինչ հայրն սպասում է, որ որդին կսկսէ իրաւաբանութեամբ զբաղուել քաղաքում և փող վաստակել, իսկ ծնողական փառասիրութիւնով լցուած մայրը յոյս ունի, որ նորաւարտ ու գեղեցիկ Պետեան իրեն կընկերանայ Բորժոմ գնալու և ամառն այնտեղ անցկացնելու, — Պետրոսն յայտնում է, որ ծնողներից ոչ մէկի ասածն անել չէ կարող և շուտով գնալու է հայ գիւղերը գործելու: Նոյն իսկ նրա վրայ աչք դրած, օժտաւոր ու գեղանի Աղեկինայի հրապոյները չեն կարողանում նրան յետ կասեցնել մտադրութիւնից: Պետրոսն արագութեամբ պատրաստութիւններ է տեսնում և ուղևորում գաւառ:

«Երբ քո ձեռքը կտեղծէ գիւղում գովութեան արժանի գործ, — ասում է Կամսարեանի ընկերներից մէկը, — կտեսնես, որ յետոյ լոյս կընկնեն ուրիշ ձեռքեր, որոնք նոյնը կանեն ուրիշ գիւղերում: Ո՞վ գիտէ, զուցէ հէնց քեզ է վիճակուած կարապետ լինել այն գաղափարական գործին, որ ամփոփում է իւր մէջ գիւղական ժողովրդի ապագայ բարօրութիւնը և որի մասին այնքան շատ խօսել ու քարոզել է հայ լրագրութիւնը»:¹⁾

Պետրոսի ընկերոջ այս խօսքերից երևում է, որ գիւղական ժողովրդի բարօրութեան գաղափարական գործը գեռ ևս առաքեալների չունի և որ Կամսարեանը պէտք է լինի առաքեալների կարապետը: Այս են ապացուցում նաև Թարսաշայի պոստի կայարանի վերակացուի այն խօսքերը, որ նա արտասանում է Պետրոսի մտադրութիւնն իմանալու ժամանակ:

«Փառք քեզ, Աստուած, վերջապէս գտնուեց մէկը, որ

1) Մուրաց. երկաս. եր. 122:

մեր տրտունջը լսեց... Դուք ուրեմն միակ մեծ մարդն էք մինչեւ օրս իրենց ուսումն աւարտած հայ երիտասարդների մէջ»:¹⁾

Վերակացուի խորհրդով Պետրոսն գործունէութեան վայր է ընտրում Սեանայ լճի ափին ընկած ձապօտիկ կամ Զիբուխլու գիւղը:

Քաղաքում մեծացած ու գիւղի երեսն ամենեւին չտեսած Կամսարեանն, երբ հասնում է Զիբուխլու, վայրկեանապէս հիասթափւում է, տեսնելով այնտեղի ծուռ ու մուռ փողոցները, թմբաձև, հողածածկ ու լոյսից զուրկ տները, աղբի շերտերով ու աթարի փշուրներով ծածկուած դետինը և գարշահոտ քակորի բլրակները:

«Եթէ, իրաւ, սա է հայ գիւղացու բնակավայրը, ապա հաղիւ թէ հնար լինի ապրել ու գործել այդպիսի տեղ», — մտածում է Կամսարեանը:²⁾

Զիբուխլուի տանուտէրի հետ ունեցած խօսակցութիւնը հայ գիւղի մաքրութեան, խեղճութեան ու աղքատութեան մասին աւելի են մտատանջութեան մէջ ձգում նրան:

«Այստեղ հաստատուն կամքի հետ միասին պէտք է ունենալ և մեծ համբերութիւն. — խօսում է Կամսարեանն ինքն իրեն, — ծառից ծառատակը միշտ մօտ է երևում, բայց երբ թռչում ես, այն ժամանակ է միայն տարածութիւնն իմացուած: Մինչև այժմ ես դեռ թռչելու որոշումն չեմ արել, և արդէն տարածութիւնն անհուն է թւում, ինչ կլինի, եթէ սկսեմ թռչել... արդեօք ոյժերս կընկերեն, թեւերս չեն թռլանալ...»³⁾

Զիբուխլու հասնելու առաջին օրը Կամսարեանի գործը լինում է շրջել գիւղում, աւելի ծանօթանալ այն վայրի հետ, որտեղ գործելու է: Այս ծանօթութիւնն աւելի է խախտում Պետրոսի հաւատը. ամեն ինչ յուսահատեցնող է

1) Մուրաց. երկաս. եր. 144:

2) Նոյնը, եր. 163:

3) Նոյնը, եր. 176:

գրւղում, ամեն ինչ վանող: Նոյն իսկ հայ գեղջկուհին, որի զմայլելի գոյներով նկարագրութիւնը կարգացել է Աբովեանի վէպում, այժմ բոլորովին այլ, բոլորովին մուսլերանգնեցող է հանդէս գալիս Կամսարեանի, գիւղի առաքելի, առաջ:

«Դժուար է, շատ դժուար է, այստեղ ապրելը—նկատում է Կամսարեանը՝ գլուխը շարժելով ամբողջ օրուայ շրջագայութիւնից յետոյ:

«Խն, քե նման աղա մարդու խմար դժար» ա,—հաստատում է տանուտէրը: ¹⁾

Հետեւեալ առաւօտեան Պետրոսի հոգում արդէն կատարեալ պայքար է սկսուած: Դադափարական «ես»-ը ցանկանում է գործել գիւղում ու շէնջում է Կամսարեանի աւանջին:

«Ախ, եթէ կարողանայի, եթէ հնարաւոր լինէր...»

Իսկ անձնասիրութեան «ես»-ն էլ ուրիշ երգ է երգում.

«Ի հարկէ, չես կարող, ի հարկէ, անհնար է, այս ժողովրդի կեանքն ու վիճակը քսաներեք դար առաջ այսպէս է նկարագրել Քսենոփոնը, քսաներեք դար յետոյ էլի այսպէս կը նկարագրէ մի ուրիշ Քսենոփոն... այստեղ դու ոչինչ անել չես կարող»:

Յաղթանակը տանում է անձնասիրութեան «ես»-ը, և Կամսարեանը վճռում է.

«Ոչ, անկարելի է, մեր ուժից վեր է... դա միայն ցնորք է և բանդագուշանք. ես ի դուր եմ այստեղ ժամավաճառ լինում»:²⁾

Բայց գիւղը թողնելու վճիռը Կամսարեանն իսկոյն չի իրագործում, օրովհետեւ կամենում է տեսնել նաև Սեւանի մենաստանը, որ Ջիբուխլուի մօտ է գտնուում: Մենաստանում էլ Պետրոսը տեսնում է յետաձնացութեան ու անշարժութեան օրինակներ: Այս փոքրիկ ճանապարհորդութիւնից յետոյ նոյն օրը Կամսարեանը վերադառնում է

1) Մուրաց. երկաս. 220:

2) Նոյնը, եր. 223—224:

Ջիբուխլու, որտեղ օրը մթնացնելու համար այցելում է տիրացու Մոսու խալֆայական դպրոցը: Այդ օրը Պետրոսը պատահմամբ մի բարի գործ է կատարում. մի խեղճ գիւղացու աղատում է վաշխառուի ճանկերից:

Երկրորդ գիշերն էլ Պետրոսն ստիպուած է լինում մնալ Ջիբուխլուում: Հակառակի պէս գիշերը սաստիկ փոթորիկ է բարձրանում, և Կամսարեանը հարկադրուած է լինում մտնել գիւղացու սենեակներից մէկը, որտեղ սակայն հանգստութիւն չէ գտնում միջատների ձեռքից: Վերջապէս անձրևը դադարում է, որով Պետրոսը հնարաւորութիւն է ունենում դուրս գալու տանուտէրի բակն ու այնտեղ գիշերել:

Քաղցր երազները փոխադրում են երիտասարդին Բորժոմի Կամսարեանը գտնուում է իրենց ամառային բնակարանում և վայելում է մաքուր ու համեղ նախաճաշ. Ահա և «Հանքային» պարկը կարկաչահոս Բորժոմկայի ափին: Երիտասարդների, տիկիւնների մի բազմութիւն զուարճանում է զանազան խաղերով: Յանկարծ մէկն առաջարկում է Բորժոմկայի եօթը կամուրջներն անցնելով մի զբօսանք կատարել: Ամենքը համաձայնում են:

«Կամսարեանն, ի հարկէ, իւր թեւն է առել չքնաղ Ադելինային, որ այդ վայրկենին քնքոյշ էր աւելի, քան գարնան վարդը, գրաւիչ ու քաղցրաբոյր՝ քան ծաղիկոյի շուշանը և սիրախօս ու գեղաձայն, քան այգածին սօխակը... Չորրորդ թէ հինգերորդ կամուրջն էին անցնում, երիտասարդը չէր յիշում, և ահա խիտ ծառերի մի սիրուն պուրակ շրջապատեց նրանց, Մի վայրկեան նրանք տեսան իրենց միայնակ և կանգ առին հովանաւոր ծածկարանի մէջ: Գեղանի կուսի լուսավառ հայեացքը սեւեռուեց երիտասարդի սիրայոյզ աչերին, և վարդագոյն շուրթերը ժպտի աննման ծիածանի միջից շշնջացին կիսաձայն,

— Ինչո՞ւ այդքան ուշացար... Եթէ գիտենայիր, թէ սրբան անձկութեամբ էի սպասում քեզ... սրպիսի կարօտով իմ օրերն անցնում...»

Եւ շուշան բազուկները պատեցին իսկոյն պարանոցը

երիտասարդի, որ գրկեց նրան քնքշաբար և սեղմեց կրծքին մեղմով... Հրատապ շուրթերը հանգիպեցան իրար, և արքայութիւնը մի վայրկեան իջաւ երկրի վրայ...»¹⁾

Սակայն երազի ամենաքաղցր ընթացքին տանուտէրի կովը բակում ահեղաձայն բառանշում է, և կամսարեանը քնից վեր թռչելով տեսնում է, որ առաւօտ է, և ինքը, աւաղ, գտնուում է չարաբաստիկ Չիբուխուում:

„Фы, что за безобразие!“ — աղաղակում է երիտասարդը և արագ հագնուելով նստում է պոստային կառն ու փախչում Չիբուխուից՝ շունչը Բորժոմում իրենց ամառային բնակարանում առնելով: Ծնողները ցնծութեամբ ընդհանուր են «կռօների» երկրից փախած որդուն:

Նոյն օրը երեկոյեան Բորժոմի անտառապատ բարձունքներից մէկի վերայ, մի գեղեցիկ պարկում տեղի է ունենում գիւղի փրկչի ու գեղանի Ադելինայի հանգիստաւոր նշանադրութիւնը...

Մեծ յոյսեր տուող առաքեալը դառնում է գաղափարի մի ամենատոկոսական դասալիք:

Այսպիսով այն հարցին, թէ ունեցման արգեօք քոյր Աննան ու իւր ուսուցիչն արժանաւոր հետևողներ, Մուրա-ցանը վերջին անգամ պատասխանում է բացասաբար:

Հապա տգիտութեան, օրինադանցների, վաշխառուների ու բնութեան դէմ մղելիք կռիւն. մի թէ այլևս չի կարելի յուսալ այս կռիւ յաջողութեան համար, Հապա անուսում, թշուառ ու աղքատ շինականը, գլխակոր Սային ու թոռները և օրն ի բուն տքնող Աւանանց բեխէքը, մի թէ այլևս չի կարելի հաւատալ, որ սրանց դրութիւնը երբ և իցէ կարող է բարւոքուել, Հապա մոռացուած ու անտիրական հայ գիւղերը, մի թէ բոլորովին պէտք է մարի կենդանութեան կրակը, որ նրանց մէջ հազիւ հազ է առկայծում:

«Առաքեալ» վիպակի վերջին խօսքերով Մուրացանը շատ օրոշ պատասխանում է այս հարցերին:

1) Նոյնը, եր. 307—308:

կամսարեանի ու Ադելինայի նշանադրութեան հանգէսը նկարագրելուց յետոյ հեղինակը հարցնում է.

«Իսկ Չիբուխուն... Սեանը...»:

Եւ ապա սրաի խորին կսկիծով հետեւեալ պատասխանն է տալիս.

«Նրանք դարձեալ մնացին իրենց տեղն անշարժ ու անփոփոխ, ինչպէս հարազատ մասունք անփոփոխելի յաւիտենականութեան...»¹⁾

Գիւղի փրկութեան գործը վերջնականապէս տանու է տուած, որովհետեւ ինտելիգենցիան խմել է Լեւոյի ջրից, մոռացել է Աւետեաց երկրի խոստումներն և Ահարոնի պէս երկրպագում է ոսկեայ հորթին:

Հանգել են բոլորովին յոյսի ջահերը: Հողի վշտի նուագները փոխուել են մահերգակ մեղեդիների:

* *

Սոյն աշխատութեան նպատակը — հայոց նոր գրականութեան մի փոքրիկ ածուի ուսումնասիրութիւնը, Մուրացանի երեք երկերի, այն է՝ «Խորհրդաւոր միանձնուհու», «Նոյի ագռաւի» ու «Առաքեալի» պատմական-գրական վերլուծութիւնը — կատարուած կարող ենք համարել:

Այս վերլուծութիւնն երեան հանեց, որ հայ գիւղի ներկայ թշուառ դրութեան պատճառը փողային տնտեսութիւնն է, որն անհրաժեշտօրէն տանում է դէպի գիւղացի դասակարգի անկումը: Տեսանք, որ Մուրացանն ու զացի դասակարգի անկումը, Տեսանք, որ Մուրացանն ու հերոսները, իբրեւ գիւղացիութեան իդէոլոգներ, նպատակ ունեն պահպանելու գիւղացի դասակարգի ամբողջութիւնն և բարւոքելու տնտեսական դրութիւնը: Նրանք ուսուպիստ և բարւոքելու տնտեսական դարգացման օրէնքները՝ ներ են և, չըմբռնելով տնտեսական զարգացման օրէնքները՝ կռուում են հետեւանքների դէմ առանց պատճառները վերացնելու, ուստի նրանց՝ գիւղը փրկելու ճրագիրը չի կարող վերացնել շինականի աղքատութիւնը: Նրանք ուսու-

1) Մուրաց. երկաս. եր. 336:

պիստներ են և չիմանալով հասարակական խմբերի պայ-
քարի նշանակութիւնը՝ յոյսները դրել են ինտելիգենցիայի
վերայ, որ հնարաւորութիւն չունի ի կատար ածելու և չէ
էլ ի կատար ածում նրանց իդէալները:

Մուրացանի պետսիմիզմի պատճառը նրա ուտոպիզմն է:

Գիւղը, որ նկարագրուած է այս հեղինակի երկերում,
փողային տնտեսութեան շրջանի գիւղն է: Այս տնտեսու-
թեան չարիքները հայ գիւղի թշուառութիւններից վեր-
ջինները չեն, հայ գիւղը գեւեւ խմելու է նաև դառ-
նութեան այն վերջին բաժակը, որ այժմ խմում են տըն-
տեսապէս զարգացած ուրիշ երկիրների զիւղերը: Հայ
գիւղն ենթարկուելու է կապիտալիզմի չարիքներին:

Ուտոպիստներին սարսափեցնում է այս հեռանկարը:

Սակայն ով ուտոպիստ չէ և գիւղական թշուառու-
թիւնները վերացնելու համար տնտեսութեան յեղաշրջում
կատարելու չի ձգտում, ով աղքատութեան մէջ ոչ միայն
աղքատութիւն է տեսնում, այլ և փրկարար մեծ ոյժ, նա
գիտէ, որ կայ պատմական մի այլ հեռանկար էլ:

Երբ կապիտալիստական տնտեսութիւնը կըսկսէ աւե-
րածութիւնները նաև գիւղում, երբ այստեղ էլ կը կենդրո-
նանայ հարստութիւնը սակաւաթիւ ձեռքերում, կը զարգա-
նայ սակաւահոգութիւնը, կը բազմանան սեփականազուրկ-
ները, ազգաբնակչութեան մեծամասնութիւնը կապրէ իւր
բազուկների ոյժը վաճառելով և երբ, իբրև հետևանք այս
բոլորի, գիւղում էլ ուժգին կը հնչուի միսիթարիչ ձայնը, որ
կանչում է իւր մօտ բոլոր վաստակեալներին ու բեռնա-
ւորներին, այն ժամանակ կընչէ կապիտալիստական հա-
սարակութեան վերջին ժամը:

1911 թ. օգոստոս:

Մեծ Ղարաբիլիսա:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	երես
I. 19-րդ դարի առաջին յիսնամեակը հայ կեանքում	3.
II. Գիւղի աղքատութիւնը Մուրացանի երկերում	7.
III. Տնտեսական յեղաշրջում 19-րդ դարի երկրորդ յիսնամե- ակում	9.
IV. Փողային տնտեսութեան ազդեցութիւնը գիւղացիութեան վրայ	11.
V. Փողային տնտեսութիւնը գիւղում	15.
VI. Բերքով ու փողով վաշխառութեան տարրերութիւնը	18.
VII. Փողով վաշխառութիւնը գիւղում	21.
VIII. Գիւղը փրկելու ծրագիր	24.
IX. Գիւղացիական ուտոպիզմ	28.
X. Ինտելիգենցիան գիւղի վիշապաբաղ	33.
XI. Գիւղացւոյ միանձնուհին ու իդէալական գիւղի պատ- կերը	36.
XII. Մոռացում տապանն ու Նոյի ագուաները	42.
XIII. Առաքելալը դասուիք: Յոռետեսութեան նուագներ	47.
XIV. Դառնութեան անխուսափելի բաժակն ու յարութիւնն ի մեռելոց	53.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍԵՐ

- I. Ընդհանուր սահմանադրություն
- II. Քաղաքացիական իրավունք
- III. Հարկային օրենսդրություն
- IV. Գյուղատնտեսական իրավունք
- V. Գործադիր օրենսդրություն
- VI. Բնակավայրերի օրենսդրություն
- VII. Գործադիր օրենսդրություն
- VIII. Գործադիր օրենսդրություն
- IX. Գործադիր օրենսդրություն
- X. Գործադիր օրենսդրություն
- XI. Գործադիր օրենսդրություն
- XII. Գործադիր օրենսդրություն
- XIII. Գործադիր օրենսդրություն
- XIV. Գործադիր օրենսդրություն
- XV. Գործադիր օրենսդրություն
- XVI. Գործադիր օրենսդրություն
- XVII. Գործադիր օրենսդրություն
- XVIII. Գործադիր օրենսդրություն
- XIX. Գործադիր օրենսդրություն
- XX. Գործադիր օրենսդրություն
- XXI. Գործադիր օրենսդրություն
- XXII. Գործադիր օրենսդրություն
- XXIII. Գործադիր օրենսդրություն
- XXIV. Գործադիր օրենսդրություն
- XXV. Գործադիր օրենսդրություն
- XXVI. Գործադիր օրենսդրություն
- XXVII. Գործադիր օրենսդրություն
- XXVIII. Գործադիր օրենսդրություն
- XXIX. Գործադիր օրենսդրություն
- XXX. Գործադիր օրենսդրություն



Լոյս է տեսել ու վաճառուում է

ԹԱԴ. ԱՆԴՍԼԵԳԵԱՆԻ

„ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ“

ՊԱՏՄԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ՎԵՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն. Դասակարգ ու գրականություն: Հոգևորականություն Արուսեանի ժամանակ: Վաճառական դասն Արուսեանի ժամանակ: Գիւղացիությունն Արուսեանի ժամանակ: Գիւղը վէպի մէջ: Վէպի առաջին գլուխը: Վէպի միւս գլուխները: Վէպի մասերի արժէքը: Գիւղացու վերաբերմունքը դէպի երկրագործական աշխատանքն ու գիւղական կեանքը: Գիւղացու վերաբերմունքը դէպի փողոցին տնտեսությունն ու վաճառական դասը: Գիւղացու վերաբերմունքը դէպի հոգևորականությունը: Արուսեանի վերաբերմունքը դէպի գիւղական տնտեսությունը: Վաճառականությունն ու հոգևորականությունը: Մեթոդ ու հետևանքներ:

31176

4622
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԳԻՆԵ Է 20 կոպեկ.

Պէտք է զիմել գրավաճառներին, կամ հեղինակին
այս հասցեով.

Игдырь, Эрив. губ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0379750

67.855